Իսկ հարսանիքի օրը: Տեսնես՝ որոշվե՞լ են: Մարտին լավ չի, մարտի 1 կա, բան կա... մայիսին հարսանիք չեն անում: Մնաց ապրիլը: Ավելի ճիշտ՝ ապրիլի սկիզբը, որովհետեւ հետո կգա Ապրիլի 24-ը, ապա՝ քաղաքացու օրը: Ինչ իմանաս, թե ինչ կլինի Ապրիլի 24-ին, երբ ժողովուրդը բարձրանա Ծիծեռնակաբերդ ու տեսնի քարուքանդ համալիրը:

Կարդացեք՝ էջ 5



Վանք հասնելը փորձություն է: Մեքենայով գնալու դեպքում պետք է հատել Հայաստան-Վրաստան սահմանը առնվազն չորս անգամ՝ բացատրելով, թե ուր ես գնում եւ ինչ նպատակով, որքան ժամանակով: Այլ ճանապարհներ էլ կան, որոնք հնարավորություն են տալիս տեղ հասնել առանց սահմանահատումների: Դրանք կարելի է անցնել միայն ոտքով:

Կարդացեք՝ էջ 7

Գարեգին 2-րդի քրեական հետապնդումը հստակ ուղերձ է ընդդիմության առաջնորդներին: Փաշինյանը պատրաստ է դյուրությամբ զիջել Հայաստանի դիրքերը դրսում, սակայն երկրի ներսում պատրաստ է ամենակոշտ քայլերը կատարել: Բարոյական սահմանափակումներ նա չունի, ուստի առաջիկա 6 ամիսները Երեւանում լինելու են տուրբուլենտ:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 21 (4156), 18 փետրվար, չորեքշաբթի, 2026

www.hraparak.am

ՔՊ-ի ներկուսակցական ընտրություններից հետո գործող պատգամավորներից շատերը խոր ընկճախտի մեջ են հայտնվել, քանի որ քիչ ձայն են ստացել եւ տեղ չեն գտել անգամ պատգամավորության թեկնածուների առաջին 100-յակում: Օրինակ, ՀՀԿ-ից ՔՊ անցում կատարած պատմաբան Շիրակ Թորոսյանը 103 ձայն է ստացել, ՔՊ-ն ճամբարափոխին, ըստ էության, արժանի դաս է տվել: Երեկ Թորոսյանը չցանկացավ զրուցել մեզ հետ, անհեթեթ պատճառաբանություններ բերեց, թե, միեւնույն է, ինչ խոսի, մենք մեր ուզածն ենք գրելու: Ախալքալաքցի պատգամավորն ակնհայտ դեպրեսիայի մեջ էր, եւ չկարողացանք համոզել, որ մեր հարցերին պատասխանի: Կապանցի պատգամավոր Մարինա Ղազարյանն էլ, որ ընդամենը 64 ձայն է ստացել, մոտ հինգ րոպե հեռախոսով բացատրում էր, որ չի կարող խոսել, դրսում է՝ միջոցառման, թեեւ այդ ընթացքում կավարտեինք հարցուպատասխանը: Առաջին 100-յակից դուրս մնացածների թվում են նաեւ պատգամավորներ Արմենուհի Ղազարյանը, Հռիփսիմե Գրիգորյանը, որն Արարատ Միրզոյանի «թիկնապահն» է ՔՊ-ում, քանի որ ամուսինը Միրզոյանի աշխատողն է, Էմմա Պալյանը, Միքայել Թումասյանը, Հերիքնազ Տիգրանյանը, որը, ի դեպ, ԱԺ հանձնաժողովի նախագահ է, Գագիկ Մելքոնյանը, Էսթեր Այվազյանը, Մարտի 1-ի զոհերից Գոռ Քլոյանի քույրը՝ Անուշ Քլոյանը, Տիգրան Պարսիլյանը, Վանիկ Օհանյանը:

Ար տեղեկություններով, իշխանությունները պատրաստվում են մայիսի 28-ին՝ ընտրություններից ընդամենը 10 օր առաջ, մեծ շքերթ անցկացնել: Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադրման օրը՝ անկախության տոնին անցկացվելիք շքերթը, պարզ է, որ փիառ նպատակներով է իրականացվում, չնայած Փաշինյանի իշխանության ժամանակ մենք անկախության կարգավիճակից ահռելի նահանջ ենք գրանցել: Ակնհայտ է, որ նա հիմա ամեն ինչ անում է, որ հակառակն ապացուցի, եւ այդ շքերթը եւս դրան է ուղղված՝ հանրության լայն շերտերին փորձում են ներշնչել, որ այս իշխանությունն արժեւորում է մեր հաղթանակները, Սարդարապատի հերոսամարտը եւ պատրաստ է հանուն հայրենիքի ազատագրական պայքարի: Շքերթին սկսել են նախապատրաստվել դեռեւս դեկտեմբերից, պաշտպանության նախարարությանը հրահանգվել է՝ զորամասերի բարետես զինվորներին, նաեւ՝ կին զինծառայողների հավաքագրել: Եվ արդեն սկսել են նույնիսկ շքերթի փորձեր անել:

Հիասթափվելու 3 պատճառ

Թվում է՝ մի անմեղ եւ ուրախալի լուր է հայտնել վարչապետի կինը, պետք է միայն շնորհավորանքներ ու բարեմաղթանքներ հնչեն, մանավանդ՝ խնդրել է կոռեկտ լինել, բայց ինչքան լուտանք ու չարախոսություն է հնչում: Եվ մեղավորը միայն չարախոսները չեն, այլ՝ հենց իրենք, որ ժողովրդին հասցրել են այս վիճակին, հայհոյանքն ու չարախոսությունը դարձրել հանրային շփման ձեւ, նաեւ՝ կառչել իշխանությունից եւ չեն ուզում տեսնել, որ հանրային մերժումն այսօր ավելի մեծ է, քան 2018-ին էր՝ Սերժ Սարգսյանի նկատմամբ: Ուղղակի այն ժամանակ այդ մերժումն առաջնորդող կար՝ հանձին Նիկոլ Փաշինյանի, այսօր չկա: Եվ այդ ալիքն օրըստօրե հզորանում է, համալրվում, դառնում ավելի սարսափեցնող: Իշխանությունը պահելու ցանկացած նոր ճիգ ու ջանք, իշխանափոխության հետաձգում՝ հայտնի չէ, թե ինչ ավարտ կարող է ունենալ: Անգամ ամիսներ առաջ բավականին չեզոք, դրական տրամադրված մարդիկ են հիասթափվել այս իշխանությունից: Ընդամենը դեկտեմբերին զրուցակիցս ամուր որոշում ուներ՝ ընտրելու եմ Նիկոլին, նախ՝ որովհետեւ այլ արժանի թեկնածու չեմ տեսնում, հետո՝ համակրում եմ, համարում եմ, որ երկրի շահերին ծառայող, սրտացավ ղեկավար է: Անցել է 2 ամսից պակաս ժամանակ, վստահ եմ, որ ոչինչ չի փոխվել, սակայն, ի զարմանս ինձ, ինքն է խոսակցություն բացում՝ չեմ ընտրելու Նիկոլին: Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց այս կարճ ժամանակում: 3 պատճառ է նշում նախկին նիկոլականը. ահավոր հիասթափվեցի, երբ իր մեքենայի վրա թիվ 1 համարանիշը դրեց, ուրեմն լուրջ մարդ չէ: Ու Եկեղեցու դեմ արշավի իմաստը չեմ հասկանում: Սկզբում կարծում էի՝ իրոք ուզում է Եկեղեցին մաքրել, հետո հասկացա, որ բլեֆ է՝ լրիվ ուրիշ ծրագիր է իրականացնում: Եվ երրորդը. պարգեւավճարները, որը հաբռգելու, իրեն «ցար ի բոգ» զգալու մասին է վկայում:

Չնայած երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի թիմում դեռ ցուցակի հարց չեն քննարկել, սակայն «Հայաստան» խմբակցության ներսում հասկացել են, թե ում է երկրորդ նախագահը դիտարկում ցուցակի առաջնային տեղերում. դրանք այն մարդիկ են, ովքեր վերջին օրերին մարզային ակտիվ այցելություններ են իրականացնում: Ակտիվ կանանց եռյակում են Քրիստինե Վարդանյանը, Ագնեսա Խամոյանը, Աննա Գրիգորյանը, ցուցակի առաջնամասում կլինեն նաեւ Իշխան Սաղաթելյանը, Գառնիկ Դանիելյանը, Աղվան Վարդանյանը, Արծվիկ Մինասյանը:

ԱՐԱՄ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ ՆՈՐԻՑ ՏՐՈՅԱԿԱՆ ՁԻՈՒ ԿԵՐՊԱՐՈՒՄ

Քաղաքական կուլիսներում խոսում են, որ «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանն ի սկզբանե մտադիր է եղել Փաշինյանի հետ մեկ ցուցակով մասնակցել համապետական ընտրություններին, սակայն նրա առաջարկը մերժվել է, եւ գլխավոր պատճառն այն է, որ Փաշինյանը պատասխանել է՝ Վեհափառի աջը համբուրած մարդը չի կարող տեղ գտնել իր գլխավորած ցուցակում: Արամ Զավենիչը փորձել է արդարանալ, այդ մասով պարզաբանումներ է տվել եւ հետագայում անգամ հրապարակային դիրքորոշում է հայտնել Փաշինյանի՝ Եկեղեցին «բարեկարգելու» ծրագրի վերաբերյալ, բայց նրան չեն ներել: Իհարկե, կա նաեւ այլ նպատակ՝ երկրորդ ուժ մտցնել ԱԺ, որի հետ անհրաժեշտության դեպքում կոալիցիա կկազմեն ու իշխանություն կվերցնեն: Սակայն Արամ Սարգսյանը կարծում է, որ իշխանությունը «քցում» է իրենց, քանի որ նույն էլեկտորատն ունեն, Երեւանի ավագանիում գրեթե մեկ միասնական ուժ են ներկայանում, եւ քիչ հավանական է, որ իրենք անցողիկ շեմը հաղթահարեն. իշխանություն ընտրող մարդիկ ՔՊ են ընտրելու, ինչո՞ւ պետք է «Հանրապետությանը» ձայն տան: Հիմա որոշել են, որ Արամ Սարգսյանը որոշ հարցերում սկսի քննադատել իշխանություններին, որպեսզի իշխանությունից հիասթափվածների եւ նախկիններին մերժողների ձայները ստանա:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԵԹԵ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԼԻՆԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԸՆԹԱՑՔ ԿՈՒՆԵՆԱՐ

Փետրվարի 14-ին Մյունխենում տեղի ունեցած անվտանգային հարցերով կոնֆերանսի ժամանակ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կրկին ոտնահարել է Հայաստանի Հանրապետության շահերը, զազրախոսել հայերի հասցեին: Նախ՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության դեմ Բաքվում ընթացող ապօրինի դատավարությունները համեմատել է Նյուրնբերգի միջազգային տրիբունալի հետ: France 24-ի լրագրողի դիտարկմանը, թե կարող է արդյոք քայլ անել եւ ներում շնորհել նրանց՝ թերթել այդ էջը, Ադրբեջանի նախագահը պատասխանել է. «Այդ մարդիկ

լուրջ հանցանքներ են կատարել մարդկության դեմ: Պատկերացրեք՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին՝ նյուրնբերգյան դատավարությունից երկու ամիս անց, ոմանք գային եւ ասեին՝ խնդրում ենք ազատ արձակել մահվան դատապարտված նացիստ առաջնորդներին: Դա նույն բանն է, նույնիսկ ավելի վատ: Նրանց հանցանքներն ավելի ծանր են, քան այն, ինչ արել են նացիստները Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ»: Եվ հայտարարել է, որ խաղաղության պայմանագիրը հնարավոր է ստորագրել «հաջորդ իսկ օրը», երբ Հայաստանը կփոխի Սահմանադրությունը: Հասկանալի է, որ խոսքն Անկախության հռչակագրի դրույթի մասին է, որը սահմանում է Արցախի հետ վերամիավորում: Սա նոր թեզ չէ, բայց հնչել է նորից, եվրոպական բարձր հարթակից եւ միջազգային լսարանի առաջ:

Մյունխենյան անվտանգության կոնֆերանսում արված հայտարարությունների վերաբերյալ լսեցինք քաղաքագիտության դոկտոր, Մոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտի ռազմաքաղաքական հետազոտությունների կենտրոնի նախկին առաջատար փորձագետ **Միխայիլ Ալեքսանդրովի** մեկնաբանությունները: Ալեքսանդրովի դեմ ժամանակին պայքարում էր ադրբեջանական լոբբին՝ Ռուսաստանում, իսկ 2022 թվականին անգամ նրա դեմ Ադրբեջանը միջազգային հետախուզում է հայտարարել:

- Մի կողմից, մեր Սահմանադրության մեջ գրված է Հայաստանի եւ Արցախի վերամիավորման մասին՝ Անկախության հռչակագրում, եւ եթե Փաշինյանն ասում է, որ Արցախն Ադրբեջան է, Ալիեւն էլ, հասկանալի է՝ Սահմանադրությունը փոխելու պահանջ է ներկայացնում՝ օգտվելով դրանից, բայց մյուս կողմից պարզ է, որ սա միակողմանի եւ անօրինական պահանջ է: Մինչեւ ո՞ւր է հասնելու, ի վերջո, Ալիեւն իր հավակնություններում:

- Հարցի մի ասպեկտն այն է, որ Փաշինյանը Սահմանադրությունը փոխում է այլ պետության պահանջով, այսինքն՝ ստացվում է, որ Փաշինյանը, որը եկել է իշխանության Հայաստանի սուվերենության գաղափարի ներքո, փաստացի հանձնում է ինքնիշխանությունը: Իրականում, նա խաբեց հայերին: Ասում էր, որ Ռուսաստանը խախտում է Հայաստանի ինքնիշխանությունը, որ ինքը, ահա՝ Հայաստանն ավելի սուվերեն է դարձնելու: Բայց Ռուսաստանը գոնե չէր պահանջում Հայաստանից՝ փոխել Սահմանադրությունը, ներքին օրենքները: Իսկ հիմա նա այնպիսի իրավիճակում է, որ ստիպված է երկրի սահմանադրությունը փոխել օտար պետության պահանջով: Սա, իհարկե, վրդովմունք է առաջացնում: Նրա հիմնական նպատակն իշխանությունը պահելն ու իր անփառունակ կառավարումը շարունակելն է: Իսկ երկրորդ ասպեկտն այն է, թե ինչպես փոխել Սահմանադրությունը: Օրենքով փոխելու դեպքում պետք է հանրաքվե անցկացնել, եւ ամենեւին էլ փաստ չէ, որ Փաշինյանն այս դեպքում կհաղթի, եւ հանրաքվեն վտանգավոր է նրա համար: Իսկ ընդամենը պետք է մի բան, որ Անկախության հռչակագիրը չմտնի Սահմանադրության մեջ, եւ վերջ: Բայց չեղարկել այդ հռչակագիրը՝ հնարավոր չէ, որովհետեւ դա մի փաստաթուղթ է, որն ընդունվում է մեկ անգամ, որոշակի պատմական պահի, ինչպե՞ս այն չեղարկել, վերադառնալ Խորհրդային Հայաստա՞ն: Դա աբսուրդ է:

- Այո, բայց Ալիեւն ասում է՝ դա ինձ չի վերաբերում, ոնց ուզում եք՝ փոխեք, Սահմանադրության մեջ գրված է, որ Հայաստանն ու Արցախը միանալու են, եւ մինչեւ դա չհանեք, չի լինի ոչ մի խաղաղության պայմանագիր:

- Բայց ո՞ւմ է պետք այդ խաղաղության պայմանագիրը: Հայաստանին այն ոչինչ չի տալիս՝ ոչ մի երաշխիք: Դուք հիշո՞ւմ եք 1994 թվականի զինադադարի մասին համաձայնագիրը, երեք լիդերների եռակողմ հայտարարությունները 2020 թվականի նոյեմբերի 9-ին: Ադրբեջանը խախտել է այդ բոլոր պայմանավորվածությունները, եւ ես գտնում եմ, որ նրա հետ ինչ էլ ստորագրես, դա չի լինելու Հայաստանի անվտանգության երաշխիք: Հայաստանի անվտանգության երաշխիք կարող են լինել միայն ուժը եւ հուսալի գործընկերային հարաբերությունները Ռուսաստանի հետ: Սկզբունքորեն, ոչ մի այլ երաշխիք լինել չի կարող: Փաշինյանն այնպես արեց, որ «կռվեց» Ռուսաստանի հետ, եւ ռուսական կողմից էլ եղան սխալներ: Երկու կողմն էլ մեղավոր են: Ես համոզված եմ, որ եթե Փաշինյանը չլիներ իշխանության ղեկին, պատմությունն այլ ընթացք կունենար: Այն մարդիկ, ովքեր մոտ թողեցին նրան իշխանության, մեծ հանցանք գործեցին Հայաստանի ժողովրդի առջեւ:

- Ալիեւն Արցախի գերեվարված ղեկավարների հասցեին Մյունխենում բացարձակ վայրի հայտարարություններ է արել: Նա նրանց համեմատել է նացիստական հանցագործների հետ, ասել, որ նրանց ազատ չի արձակելու, եւ սա էլ է եռակողմ պայմանավորվածությունների խախտում, ինչո՞ւ է Ադրբեջանի ղեկավարը տարածում այս ակնհայտ զրպարտությունն ու սուտը՝ գիտակցելով, որ դա սուտ է եւ վնասում է խաղաղությանը:

- Դա դեմագոգիա է: Նրանք նույն ձեւով պատմությունն են խեղաթյուրել, պատմական Ադրբեջան են մոգոնել, անդադար ստում են, որովհետեւ դա բոլշեւիկների կողմից ստեղծված արհեստական ազգություն է, որն ամեն գնով փորձում է հաստատվել այլ ազգերի, նրանց նսեմացման, պատմության խեղաթյուրման հաշվին: Տվյալ իրավիճակում պետք է հիշել, որ Ալիեւն էթնիկ զտում է իրականացրել Լեռնային Ղարաբաղում, սա ակնհայտ փաստ է: Հայեր հիմա Ղարաբաղում չկան, եւ այս թեման ոչ մի տեղ չի կորչի, այլ տասնամյակներով թարմ է մնալու: Ահա, այդ պատճառով էլ նա պաշտպանիչ պատ է ստեղծում, փորձում է Լեռնային Ղարաբաղի ղեկավարներին ներկայացնել որպես հանցագործներ: Թեեւ, օրինակ, եթե վերցնենք Արկադի Ղուկասյանին եւ Ռուբեն Վարդանյանին, ապա նրանք առաջին ղարաբաղյան պատերազմում նույնիսկ ռազմական գործողություններին չեն մասնակցել: Ի՞նչ կապ ունեն նրանք այն տարիների դեպքերի հետ, անգամ տեսականորեն չէին կարող առնչություն ունենալ այդ իրադարձությունների հետ: Դա լիակատար զառանցանք է: Զարմանալի է, որ Հայաստանի իշխանությունները լռում են այդ առիթով: Փաշինյանն այն աստիճանի է կորցրել ինքնիշխանությունը, որ չի կարող անգամ բացահայտել այդ նողկալի սուտը: Բայց չէ՞ որ խոսքը նրա հայրենակիցների մասին է: Էլ ի՞նչ սպասել նրանից:

- Ուզում եմ նաեւ ԱՄՆ փոխնախագահ Վենսի այցի մասին հարցնել: Ակնհայտ է, որ ԱՄՆ-ն փորձում է ամեն գնով ամրապնդվել այստեղ, եւ Ռուսաստանի կողմից այս հարցում չկա որեւէ արձագանք: Մինչ այս պահը միայն Օվերչուկի հայտարարությունը կա՝ Աբխազիայի տարածքով Վրաստանի հետ երկաթուղային հաղորդակցության վերականգնման մասին, որը, ենթադրում ենք, ԹՐԻՓ-ի այլընտրանքն է, իբրեւ թե:

- Ռուսաստանի արձագանքն ի սկզբանե անհեթեթ էր: Ինչոր երկաթգիծ են կառուցում: Փոխվարչապետ Օվերչուկի համար կարեւորը երկաթգծի կառուցումն է: Մարդը չի հասկանում՝ ինչ են նշանակում շահեր եւ անվտանգություն: Նրա համար փող-ապրանք-փողն է կարեւոր, նա ուրիշ ոչ մի բան չի հասկանում: Նա հարկային ծառայությունից է եկել, փոխվարչապետ դարձել, այդ լուրջ պաշտոնին նշանակվել, եւ հիմա նրանից միայն պրոբլեմներ են ծագում: Նա չի հասկանում, որ ռեալ վտանգ է ստեղծվել Ռուսաստանի անվտանգության համար, եւ բրթում ու բրթում է իր այդ՝ երկաթգծի հարցերը: Փաշինյանը ստորագրեց ԹՐԻՓ-ի ուղղու համաձայնագիրը, ամերիկացիներն էլ օգտվեցին առիթից եւ այժմ կամրապնդվեն այդտեղ: Թրամփի ողջ խմբավորումը, որն ամեն գնով ձգտում էր իշխանության, Իսրայելի դրածոներն են: Նրանք խաբեցին իրենց բոլոր կողմնակիցներին: Նրանք խոստանում էին, որ Ամերիկայով են զբաղվելու, կրճատելու են արտաքին ինտերվենցիաները, բայց փաստացի ստացվեց, որ իրենք ավելի շատ են միջամտում այլ երկրների գործերին, քան նախկին իշխանությունը, եւ պատրաստ են ամերիկյան ողջ բյուջեն ուղղել Իսրայելին աջակցելու գործին: Սա ստախոսների մի խումբ է, որը խաբել է սեփական կողմնակիցներին, եւ դուք ուզում եք, որ նրանք հայերի՞ն չխաբեն: Հիմա նրանք եկել են՝ օգնելու Փաշինյանին, որովհետեւ Փաշինյանն արեց այն, ինչ նրանք ուզում էին՝ համաձայնեց ստորագրել ԹՐԻՓ-ի նախագիծը, եւ նրանք ամեն կերպ աջակցելու են Փաշինյանին: Իսկ Ադրբեջանը պետք է նրանց՝ Իրանի դեմ պայքարելու համար, եւ հիմա նրանք ռեւերանսներ են անում Ադրբեջանի առաջ: 907 ուղղումը չեղարկեցին, որը խոչընդոտում էր Ադրբեջանին զենք մատակարարել: Այսինքն, ամերիկացիներն ամեն ինչ անում են՝ ելնելով Իսրայելի շահերից: ԱՄՆ-ի, ամերիկացիների շահ ես այստեղ չեմ տեսնում: Գուցե ԹՐԻՓ-ի ուղին ինքն իրենով բխում է ԱՄՆ շահերից, այն իմաստով, որ Ռուսաստանին է հետ մղում, դուրս է գալիս Միջին Ասիա, բայց գլխավոր արդյունքը լինելու է Իրանի շրջափակումը: Ի դեպ, ես չգիտեմ՝ Իրանն ինչպես է արձագանքելու: Եթե պատերազմը սկսվի, նա կարող է ուղղակի զորք մտցնել Սյունիք, եթե Իրանում հաղթանակ տանեն ռադիկալ ուժերը, իսկ եթե պատերազմը երկար տեւի, ապա նրանք անպայման հաղթանակ կտանեն:

- Ի՞նչ զարգացումներ եք տեսնում Իրանի եւ ԹՐԻՓ ուղու ապագայի հետ կապված:

- Իրանի նախագահ Փեզեշքիանը երկրորդ Գորբաչովն է: Այնպիսի իրավիճակ ստեղծեց, որ Իրանը ստիպված է պաշտպանվել, հայտնվեց փլուզման եզրին: Բարձրաստիճան զինվորականներից շատերին սպանեցին: Նա էլ, ինչպես Գորբաչովը, հայտարարում էր՝ մենք կպայմանավորվենք Արեւմուտքի հետ, եւ քանդեց ամեն ինչ: Սա էլ է քանդելու, եթե նրան ժամանակին չհեռացնեն իշխանությունից: Եթե դա լինեն լուրջ մարդիկ, ասենք՝ Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսից, նրանք հեշտությամբ զորք կմտցնեն Սյունիք, եւ, բնականաբար, այնտեղ ոչ մի ԹՐԻՓ ուղի էլ չի լինի, իսկ Ռուսաստանը չի առարկի, որովհետեւ Ռուսաստանը հասկանում է, որ ԹՐԻՓ ուղին իրեն պետք չէ, եւ Սյունիքը կլինի արդեն ոչ թե ադրբեջանական, այլ՝ իրանյան:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

Ավտովթարի ենթարկված եզդի ընտանիքին «կլոել» են

Հունվարի 11-ին Արմավիրի մարզի Վանանդ գյուղի մոտակայքում ավտովթար է տեղի ունեցել, տուժել է 5 մարդ՝ Հախոյանների ողջ ընտանիքը: Նրանք տարբեր վնասվածքներով, երկու մեքենայով տեղափոխվել են «Արմավիր» բժշկական կենտրոն: Հենց այստեղ էլ սկսվել են բուն «կինոն» ու «առողջապահական» թալանը, որտեղ Հախոյանների ընտանիքը, բառի բուն իմաստով, ռեկետի է ենթարկվել:

«2 անչափահաս երեխա կար մեքենայի մեջ, եղբայրս, եղբորս աղջիկը, կինը: Արմավիրի հիվանդանոցում ստուգումներ արեցին, ԿՏ արեցին, ասեցին՝ պետք է տեղափոխենք Երեւան, մի հատ էլ Երեւանում արեցին նույն ԿՏ-ն: Եղբորս փոքր աղջկան 4 օր պահեցին հիվանդանոցում՝ Արմավիր, 400 հազարից ավելի փող առան ինձնից: Էն մյուս երեխան Երեւանում էր՝ 1 մլն 400 հազար էլ նրա բուժումը նստեց, ճաք էր եղել ողնաշարին: Նա էլ Ծերեթելու մանկական հիվանդանոցում էր»,- պատմում է վթարի ենթարկված ավտոմեքենայի տիրոջ եղբայրը՝ **Ռուստամ Հախոյանը**:

Այսօր նա պարտքերի տակ կքած է, գլուխը բռնած՝ նստած: Որեւէ փոխհատուցում ընտանիքը չի ստացել, պետպատվերից չի օգտվել, թեեւ վթարների, շտապ անհետաձգելի օգնության համար պետք է վճարի պետությունը: Ինչպես հայտնի է, մինչեւ 18 տարեկան երեխաները 2026 թվականի հունվարի 1-ից համարվում են առողջության համընդհանուր պարտադիր ապահովագրական համակարգի շահառուներ: Նրանք պետք է անվճար բուժօգնություն ստանան, սակայն այս օրենքը, փաստորեն, ազգությամբ եզդի Հախոյանների վրա չի տարածվել:

Մենք դիմեցինք առողջապահության նախարարության լրատվական՝ խնդրելով դեպքի կապակցությամբ պարզաբանմամբ հանդես գալ: «Քանի որ վթար է եղել, այս դեպքում ԱՊՊԱ-ն է փոխհատուցում տալու, փակելով մոտ 3-3,5 մլն դրամը: Այս դեպքում, երբ որ մարդիկ հոսպիտալացվում են բուժկենտրոն, սկզբից քաղաքացին պետք է վճարումները կատարի: Իրականացվում են քննչական գործողություններ: Քննիչը որոշում է մեղավոր կողմին, եւ իրականացվում է բուն փոխհատուցումը: Սա առողջության համընդհանուր ապահովագրության դեպք չի, այլ բուն ԱՊՊԱ-ի թեման է», - ասում է նախարարության խոսնակը: Սակայն ինչ է լինելու, եթե քաղաքացին չունի գումար:

«Առողջության իրավունք» հասարակական կազմակերպության նախագահ **Անուշ Պողոսյանը** վստահեցնում է, որ հիվանդանոցներն իրավունք չունեին գումար վերցնել շտապ անհետաձգելի դեպքի համար: «Դա շտապ անհետաձգելի դեպք է, վթարի հետեւանքով ստացած վնասվածքներ են, եւ ծառայությունը պետք է մատուցվի անվճար: Դժվարամատչելի, թանկարժեք հետազոտությունները փոխհատուցվում են: Բացի դա, ԱՊՊԱ-ն պետք է փոխհատուցեր բժշկական ծախսերը: Երրորդը՝ 0-18 տարեկան երեխաների դեպքում գործում է առողջության համընդհանուր ապահովագրությունը: Այսինքն, մի քանի հոդվածով խախտում է տեղի ունեցել: Եթե վիրահատության ժամանակ օգտագործվել են տարբեր մետաղական կոնստրուկցիաներ, իմպլանտ եւ այլն, ապա սա էլ պետք է փոխհատուցեր ԱՊՊԱ-ն: Իսկ «Արմավիր» ԲԿ-ն ընդհանրապես պետք է գումար չվերցներ այդ ընտանիքից»,- ասում է փորձագետը: Տեղեկացանք, որ երկու անչափահասներն արդեն բուժվել եւ դուրս են գրվել բուժհաստատություններից, ինչն այս պատմության միակ լուսավոր կետն է: Վարույթ է հարուցված, որի շրջանակներում ընտանիքը հույս ունի ստանալ իրեն հասանելիք ապահովագրական գումարները:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՈՒԺԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ Է ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

2026-ը բուռն ընտրական տարի է խոստանում: Հունիսի 7-ին նախատեսված են ԱԺ հերթական ընտրությունները, այնուհետեւ աշնանը տեղի են ունենալու ամենաշատ ՏԻՄ ընտրությունները:

70 համայնքից 46-ում ունենալու ենք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Այսինքն՝ համայնքների 65 տոկոսում տեղի են ունենալու ընտրություններ: Ընդդիմադիր դաշտում դեռ խմորումներ են: Քննարկում են կոալիցիաներ կազմելու, միավորումների հարցը, որովհետեւ բոլորը հասկանում են, որ այս ընտրությունները վճռորոշ են լինելու, եւ ձայն փոշիացնող կուսակցություններին դա չի ներվելու: Արդեն հստակեցումներ կան, օրինակ՝ ԲՀԿ-ն եւ «Մայր Հայաստանն» արդեն հայտարարել են, որ ընտրություններին մասնակցելու են միասին: ՀՅԴ-ն ու Ռոբերտ Քոչարյանի թիմն են միասին հանդես գալու:

Մեզ տեղեկություններ հասան, որ Երեւանի նախկին քաղաքապետ, դերասան Հայկ Մարությանը, որը «Նոր ուժ» անվանումով կուսակցություն է հիմնել, հնարավոր է չմասնակցի առաջիկա պառլամենտական ընտրություններին, քանի որ բանակցությունները արդյունք չեն տալիս: Հայկ Մարությանի կնոջը՝ **Իվային**, հարցրինք՝ Ձեր ամուսինը՝ Հայկը, մասնակցելու է ընտրություններին, թե՞ ոչ: Նա ասաց. «Շատ շնորհակալ եմ հարցի համար, բայց դա ինձ ընդհանրապես չի վերաբերում: Ես նման հարցերում չկամ, իրեն պետք է հարցնեք»: Մենք նաեւ հետաքրքրվեցինք, թե, այնուամենայնիվ, ինչ կարծիք ունի առաջիկա ընտրություններին իր ամուսնու ներգրավվածության մասին: «Չէ, չէ.... Բայց, ամեն դեպքում, իմ անձնական կարծիքը որեւէ մեկին չի էլ հետաքրքրում: Շատ շնորհակալ եմ հարցերի համար, բայց էլ չեմ կարող խոսել»:

Զրուցեցինք նաեւ «Նոր ուժ» կուսակցության անդամ, Երեւանի ավագանու նախկին անդամ **Գրիգոր Երիցյանի** հետ: Երիցյանին հարցրինք՝ Մարությանը մասնակցելու է առաջիկա ընտրություններին, թե՞ ոչ:

- Հենց այս պահին ակտիվ մեր ծրագրի վրա ենք աշխատում, որպեսզի այն վերջնականացնենք, որոշել ենք անգամ համագումարի օրը, այնպես որ, մենք մասնակցելու ենք ընտրություններին:

- Ե՞րբ է նախատեսված կուսակցության համագումարը:

- Մարտի կեսերին: Դրանից հետո էլ իրականացնելու ենք բաց համաժողով:

- Գաղտնիք չէ, որ նորաստեղծ կուսակցությունները, ուժերը, անգամ հին ու կայացած կուսակցություններն ու ուժերը այս ընտրություններին պատրաստվում են դաշինքներով մասնակցել, համախմբվել, որովհետեւ քաջ գիտակցում են, որ եթե անցողիկ շեմը չհաղթահարեն, ապա ձայների փոշիացմամբ կզբաղվեն, ինչը միմիայն Նիկոլ Փաշինյանին է ձեռնտու: Ինչ կապ սեք այս առումով: Ո՞ւմ հետ եք պատկերացնում ձեր համագործակցությունը:

- Անկեղծ ասած, մենք նման քննարկումներ չունենք՝ դաշինքներ կազմելու մասով, իհարկե՝ որոշակի քննարկումներ եղել են որոշ ուժերի հետ, որոնց գաղափարապես մեզ մոտ ենք համարում, սակայն մեր նպատակն առանձին մասնակցելն է: Քննարկումներ եղել են առաջներում, սակայն դեռեւս որեւիցե հստակեցում չկա: Մենք մեզ դիրքավորում ենք որպես նոր ուժ, որը ոչ մի քաղաքական կապվածություն չունի նախկին եւ ներկա իշխանությունների հետ: Եթե համագործակցություն, ապա միայն նոր ուժերի հետ, որոնք գաղափարապես մեզ ավելի մոտ են:

- Ո՞ր ուժերն են գաղափարապես ձեզ ավելի մոտ:

- Անուններ չտամ, սակայն կան մի քանիսը, որոնք բավականին առաջադեմ ծրագրեր են ներկայացնում եւ ոչ մի կապ չունեն նախկին ու ներկա իշխանությունների հետ, այս իմաստով մենք կիսում ենք որոշակի օրակարգեր: Նրանցից շատերն անգամ չեն եղել քաղաքականության մեջ, կարող եք ենթադրել....

- Օրինակ՝ «Նժարը»:

- Այո, օրինակ՝ «Նժարը»: Նրանց գաղափարները բավականին հետաքրքիր են, սակայն դաշինքի մասով որեւէ քննարկում դեռեւս չկա: Պարզապես մոտ ենք գաղափարապես:

- Իսկ եթե դաշինք չկազմեք, կարծում եք՝ կհաղթահարե՞ք անցողիկ շեմը եւ ձայներ չե՞ք փոշիացնի:

- Ցավոք, հայաստանյան ընտրական համակարգն այդ առումով բավականին անարդար է, եւ շատերի քվեն տեղ չի հասնում, մենք հետագայում առաջարկելու ենք, որ ընտրական անցողիկ շեմն իջեցնեն, եւ «փոշիացում» ասվածը չլինի հօգուտ իշխանությունների: Ես կարծում եմ, որ առնվազն մի քանի հայտնի դաշինքներ չեն հաղթահարելու անցողիկ շեմը, եւ նրանք են լինելու ձայներ փոշիացնողը:

- Բայց օրենքում փոփոխություններ անելու համար ժամանակ չկա:

- Այո, այժմ չկա, սակայն ապագայում, եթե կարողանանք մտնել պառլամենտ, մեր տեսլականներից մեկը հենց անցողիկ շեմի իջեցումն է, մինչեւ մեկ տոկոս:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՉԼԻՆԵՄ, ԿԳՆԱՄ ՄԵՐ ԲԱԽՉՈՒՄ ՊՈՄԻԴՈՐ ԿԱՃԱՑՆԵՄ



Հարցազրույց ՔՊ-ական պատգամավոր, գեներալ **Գագիկ Մելքոնյանի** հետ:

- Տխո՞ւր եք, նեղվա՞ծ եք, որ ներկուսակցական ընտրությունների արդյունքում Ձեզ ընդամենը 100 ձայն են տվել:

- Ինչո՞ւ պիտի տխուր լինեմ, նեղվեմ:

- Տխրելու բան չի՞, գեներալ մարդ, վերջին պահին ընդունեցիք ՔՊ կրոնը՝ մտաք ՔՊ կուսակցություն, բայց էլի չգնահատեցին:

- Չէ, չէ, նեղվելու չի:

- Իսկ ինչո՞ւ այդքան քիչ մարդ Ձեր օգտին քվեարկեց:

- Բայց քիչ չի, ես 80 էի սպասում, 100 եմ ստացել:

- Ո՞նց էիք հաշվել:

- Էտենց:

- Պատվիրակների հետ խոսել էիք ու հասկացել:

- Ոչ:

- Ձեր մտքո՞ւմ էիք հաշվել:

- Հա, իմ մտքում էի հաշվել, որ կարամ 80 ձայն հավաքեմ:

- Ուղղակի ենթադրվում էր, որ ընտրություններից հինգ որոպե առաջ ՔՊ-ին անդամակցելուց հետո Ձեզ ավելի բարձր գնահատանքի պիտի արժանացնեին:

- Չէ, ընդհակառակը, ես բան չեմ արել, որ... Ով ճանաչել՝ ճանաչել է, ով չի ճանաչել՝ չի ճանաչել:

Մի նրբություն կար Մելքոնյան Գագիկի ու Մելքոնյան Գուրգենի մեջ:

- Նկատի ունեք, որ անձնագրում Գուրգեն եք գրվում, ու անո՞ւնն է խանգարել, որ քիչ մարդ Ձեզ քվեարկի:

- Երեւակայի՝ հա:

- Փաստորեն, չեք լինի ցուցակի անցողիկ հատվածում:

- Դե, կսպասենք, կերեւա՝ կլինի՞, թե՞ չի լինի:

- Կարծում եք՝ Ձեր անցած ճանապարհը հաշվի առնելով Ձեզ պիտի բերե՞ն անցողիկ տեղ:

- Չէ, չէի ասի այդպես, բայց մի բան կասեմ, որ այս ընտրությունը շատ արդար էր: Տարբեր բաներ են, եթե մարդը քեզ չի ճանաչում, չի քվեարկում քո օգտին, դա չի նշանակում, որ մոտեցումն անարդար էր, պիտի նեղանաս:

- Վա՛մ էլ չեք զգում, որ թիմի ամենաանընդունելի գաղափարները տարածողներից էիք, հարվածներ վերցրիք Ձեզ վրա, քննադատվեցիք, ու վերջում ինչ ստացվեց:

- Ոչինչ, ես ինչ արել եմ, հանուն Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի եմ արել, 88 թվականից մտել եմ պայքարի մեջ, ու իմ նպատակն էդ էր՝ ունենանք պետություն, անկախ պետություն: Փառք Աստծո, հիմա անկախ պետություն ունենք:

- Մենք վաղուց ենք անկախ, ձեր ժամանակ ընդամենը Արցախ ենք կորցրել, այդ անկախ պետության տարածքում ադրբեջանցիներ են հայտնվել:

- Մեր տարածքում կլինեն այն ժամանակ, եթե սահմանազատման ժամանակ հետ չգնան:

- Արդեն բետոնից դիրքեր են կահավորել:

- Ոչինչ, բետոնային կսարքեն, ինչ կսարքեն, հետո կգնան իրանց տարածքներ, դա չի նշանակում, որ բետոնային բաներ արեցին, պիտի մնան էդտեղ:

- Որ պատգամավոր չլինեք, ինչո՞վ կզբաղվեք:

- Լիքը գործ կա, կգնամ մեր տուն, մեր բախչեն կմշակեմ, պամիդոր կաճացնեմ: Պամիդորի գործը լավ ա:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՅՈՒՇԱԳՐՈՒ

ԿԱՆԱՉԸ ՀԱՏՈՒՄ ԵՆ, ՎԱՂԸ ՋՈՒՐ ԷԼ ՉԵՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքը, որ տարիներ առաջ միջազգային հարթակներում հայտնի էր որպես առողջարանային եւ սպորտային քաղաք, այսօր դանդաղ վերածվում է բարձրահարկ շենքերով ծանրաբեռնված, կանաչից զուրկ քաղաքի: Բազմիցս գրել ենք առողջարանային քաղաքում բազմաֆունկցիոնալ երկնաքերների, հյուրանոցային համալիրների կառուցման մասին: 1000-ից ավելի՝ մոտ 1200 մշտական բնակիչ ունեցող փոքրիկ քաղաքն այսօր զրկվում է իր տարածքներից, տարածքներ են վաճառում, ծառեր են կտրում, քաղաքի արտաքին ճարտարապետական տեսքն է աղավաղվում:

Ըստ մասնագետների՝ նման բազմաֆունկցիոնալ բարձրահարկ հյուրանոցային համալիրների շարունակական կառուցման պատճառով Ծաղկաձորը մոտ ապագայում խնդիրների առաջ կկանգնի թե՛ էլեկտրաէներգիայի հետ կապված, թե՛ ջրային ռեսուրսների: Ցանկացած կառուցապատման նախագիծ նախապես դրվում է քաղաքի ավագանու քննարկմանը, եւ քանի որ ՔՊ խմբակցությունը ձայների առավելություն ունի «Մեր համայնքը» ընդդիմադիր դաշինքի համեմատ, ցանկացած նախագիծ անցնում է:

Մեզ հետ զրույցում բարձրահարկ հյուրանոցային համալիրների կառուցման մասին իրենց դիրքորոշումը հայտնեցին ավագանու անդամները: «Մեր համայնքը» դաշինքի ավագանու անդամ **Գրիգոր Ղարիբյանն** ասաց, որ առհասարակ դեմ է բարձրահարկ շենքերի կառուցմանը, քանի որ քաղաքի դիմագիծն է փոխվում: «Հիմնականում մանրակրկիտ ուսումնասիրում եմ, թե բնակչությանն ինչքանով է խանգարում կամ օգնում, կամ ինչ կտան համայնքին այդ բարձրահարկ շինությունները: Նույնիսկ մի փոքր կասկածի դեպքում գերադասում եմ ձեռնապահ լինել, քան համաձայնություն տալ: Հարկերի առումով համայնքի բյուջե գումար կմտնի. լավ գիտեք, որ քանի գնում՝ մեր երկրում գույքահարկը տեղը տեղին բարձրանում է, դա շատ ձեռնտու է, բայց միայն գումարը չէ: Եթե ինչ-որ տեղ գազը կամ լույսը կարող ենք գնել, ջուրը ֆիզիկական գոյություն ունեցող պաշար է եւ վաղ թե շուտ կսպառվի: Այդ դեպքում քաղաքը խնդրի առաջ կկանգնի: Ավագանիներս՝ մեկս մյուսին ճանաչում ենք, վաղը, մյուս օրը... ֆրակցիայից այն կողմ կյանք կա, եւ բոլորս իրար աչքերի առաջ ենք նայելու: Բացի այդ, նույն մարդիկ եթե ինչ-որ մի բան որոշում են, վաղը, մյուս օրը շահերի բախումը տեղի է ունենալու իրենց գյուղերում: Ու էնպես չէ, որ ՔՊ-ական ինչ-որ մեկն ինչ որ ուզի, սղղացնի գնա: Շատ հաճախ եղել են դեպքեր, որ 1 ավագանու դիրքորոշումից կախված՝ հարցն օրակարգից դուրս է մնացել, կամ բոլորը դեմ են եղել՝ անկախ ֆրակցիայից, կապ չունի, թե ով է բերել»,- ասաց ավագանու անդամ **Ռուբեն Սաֆարյանը**:

Տարեվերջին աշխատավարձի 100 %-ի չափով պարգեւավճար ստացած Ծաղկաձորի ՔՊ-ական համայնքապետ Նարեկ Հարությունյանը պատասխանել է մեր գրավոր հարցմանը: Հարցրել էինք. «2025 թվականին համայնքի ղեկավարի եւ ավագանու կողմից քանի՞ համաձայնություն է տրվել՝ բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար»: Համայնքապետը պատասխանել է. «2025 թվականի ընթացքում բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար տրվել է 1 նախնական համաձայնություն՝ ավագանու կողմից, սակայն կառուցապատողը դեռ չի ստացել շինթույլտվություն»:

Հաջորդ հարցը. «2025 թ. սեպտեմբերի 9-ին ավագանու նիստում ավագանին իր համաձայնությունը չտվեց «ՏԱՆԱԱՏ» ՍՊԸ-ին՝ Ծաղկաձոր համայնքի Անտառային 1, թաղամաս 11 հասցեում բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելու համար: Նոյեմբերի 18-ին նույն հարցը դրվեց ավագանու նիստում, եւ ավագանին կողմ քվեարկեց: 2025 թ. հոկտեմբերի 14-ին ավագանին նախնական համաձայնություն չտվեց «ՓԱԲԼԻՔ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ի Ծաղկաձոր համայնքի Սարալանջի 46 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման աշխատանքներ իրականացնելուն: Դեկտեմբերի 17-ի նիստում կրկին դրվեց այս հարցը, եւ 3 ձեռնապահ, 1 դեմ քվեարկությամբ հարցն անցավ օրակարգ: Ավագանու նիստերից առաջ համայնքապետարանի կողմից հանրային լսումներ կազմակերպվո՞ւմ են, բնակիչները տեղյա՞կ են, թե ինչպես են սնկի պես, մեկը մյուսի հետեւից հյուրանոցներ կառուցվում: Եթե տվյալ բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրների հետ կապված հանրային լսում է եղել, խնդրում ենք ներկայացնել»:

Պատասխան. «2025 թ. սեպտեմբերի 9-ին ավագանին չի տվել համաձայնություն «ՏԱՆԱԱՏ» ՍՊԸ-ին՝ համարելով, որ կառուցապատման ծավալները շատ մեծ են, իսկ 2025 թ. նոյեմբերի 18-ին ավագանին տվեց իր նախնական համաձայնությունը, քանի որ «ՏԱՆԱԱՏ» ՍՊԸ-ն ներկայացրել էր նոր նախագծի տարբերակ՝ կառուցապատման ծավալը 50%-ով կրճատված: 2025 թ. հոկտեմբերի 14-ին ավագանին չի տվել համաձայնություն «ՓԱԲԼԻՔ ԿԱՊԻՏԱԼ» ՍՊԸ-ին, քանի որ ավագանու որոշ անդամներ ծանոթ չէին կառուցապատման նախագծին, սակայն մինչեւ դեկտեմբերի 17-ի ավագանու նիստը ուսումնասիրել են եւ ուսումնասիրման արդյունքում տվել են նախնական համաձայնություն: Նշեմ նաեւ, որ կառուցապատողը դեռ չի ստացել շինթույլտվություն: Նշված երկու ընկերությունների կողմից ներկայացված ծրագրերի վերաբերյալ ՇՄԱԳ շրջանակներում տեղի է ունեցել հանրային քննարկում»:

Հարց. «Բազմաֆունկցիոնալ հյուրանոցային համալիրների կառուցապատման հետ կապված՝ հաճախ հարցեր են առաջանում, որ տվյալ հյուրանոցի տնօրենը պարտավորվում է կտրած ծառի դիմաց ծառեր տնկել: Ո՞ւմ կողմից է վերահսկվում, թե քանի ծառ է կտրվել, եւ քանիսը՝ տնկվել: Ներկայացրեք, խնդրեմ, թվեր, թե 2024-2025թթ. քանի հատ ծառ է հատվել Ծաղկաձոր համայնքում եւ քանի հատ ծառ է տնկվել (նշել նաեւ ծառատեսակը)»:

Պատասխան. «Ծաղկաձորի համայնքապետարանն օրենքի ուժով չունի իրավասություն՝ արգելելու սեփականատերերին՝ կատարել ծառահատում իրենց իսկ սեփականություն հանդիսացող տարածքում, սակայն սեփականատերերի նախաձեռնությամբ եւ մեր առաջարկությամբ կազմում ենք պարտավորագիր, որպեսզի հատված ծառերի փոխարեն տնկվի եւ 5 տարի ժամկետով խնամվի 5 անգամ ավել ծառ՝ պայմանով, որ կկնքվի պայմանագիր համապատասխան լիցենզավորված կառույցի կամ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի հետ, իսկ վերահսկողություն կկատարի համայնքապետարանը: Նշեմ նաեւ, որ ունեցել ենք նախադեպ, երբ սեփականատերն իր տարածքում հատել է մոտ 90 հատ ծառ, սակայն իրենց նախաձեռնությամբ՝ համայնքապետարանի հետ համաձայնեցնելով, 2023 թ. ապրիլի 29-ին Ծաղկաձոր քաղաքում տնկվել է 1400 հատ (1200 տեսակի սոճի, 100 տեսակի տուա, 100 հատ եղեւնի՝ սովորական եւ արծաթափայլ) ծառ: Ավելացնեմ նաեւ, որ համայնքապետարանն իր իսկ նախաձեռնությամբ՝ գրությամբ դիմել է ՀՀ ԱԺ եւ կառավարություն՝ ավելացնելու օրենքի կետ, որպեսզի համայնքն ունենա իրավասություն՝ օրենքի ուժով սահմանափակելու կամ արգելելու ծառահատումը»:

ԵԹԵ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԴԱՇԻՆՔ ՁԵՎԱՎՈՐՎԻ, ՄԵՆՔ ՃԿՈՒՆ ԵՆՔ՝ ԴԱ ԲԱՆԱԿՑԵԼԻ Է

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Դրապարակի» զրուցակիցը ՀԱԿ ներկայացուցիչ **Արմեն Խաչատրյանն** է:

- Երեկ Հայ ազգային կոնգրեսը հայտարարություն էր տարածել եւ իր աջակցությունը հայտնել Հայ առաքելական եկեղեցուն: Տեսակետ-առաջարկ է հնչել, որ ընդդիմադիր ուժերը պետք է ընտրացուցակի առաջին տեղերը հոգեւորականներին տրամադրեն, որպեսզի հանրությունն ավելի մեծ վստահություն ցուցաբերի տվյալ ուժերի նկատմամբ, եւ, առհասարակ՝ կան տեսակետներ, որ հոգեւորականների ներգրավվածությունը քաղաքական պրոցեսներում կարող է խիստ օգտակար լինել: Ի՞նչ կասեք այս մասին:

- Ասեմ, որ այդ առաջարկն ինքնին չեփված առաջարկ է, մենք պետք է նախ հասկանանք՝ որքանով կարող է այն լինել խլամիտ, սակայն մի օրինակ բերեմ՝ 90 թվականին, երբ Գերագույն խորհուրդը կազմավորվեց, այդ ժամանակ մի հնարք կիրառվեց: Մոսկվայում երկու քնիչ էին ապրում՝ Թելման Գդլյանը եւ Իվանով Վալենտինը: Նրանց նկատմամբ Մոսկվան հալածանքներ էր կենտրոնացրել, ստանալով ՀՀ ԳԽ մանդատ, մենք, ըստ էության, մեր պաշտպանության տակ վերցրինք այդ երկու քնինիչներին, ովքեր ԽՍՀՄ-ի հետ կապված աղմկահարույց գործ էին բացահայտել: Մենք փաստացի պաշտպանության բացիկ ստեղծեցինք նրանց համար, եւ այդ երկուսը զերծ մնացին կրեմլյան բռնաճնշումներից: Այժմ որպես անվտանգության բարձիկ եկեղեցականներին քաղաքական պրոցեսներում ներգրավելը միտք է, որն ունի քննարկման իրավունք: Իհարկե, անպայման պետք է հասկանալ Եկեղեցու տրամադրությունը, պետք է հասկանալ այդ պրոցեսների պլուսներն ու մինուսները, սակայն կարծում եմ, որ, ամեն դեպքում, այդ առաջարկն ունի ապրելու իրավունք: Քաղաքական ուժերը կարող են քննարկել եւ կիրառել այն: Այս մասին միանշանակ ու հստակ կարծիք հայտնելը բարդ է, առանց դրա հետեւանքները հասկանալու, այնուամենայնիվ, արժե այդ մասով քննարկումներ կազմակերպել եւ հասկանալ Եկեղեցու դիրքորոշումն այդ հարցում: Բայց, ամեն դեպքում, մենք օրենսդիր մարմնում ունեցել ենք հոգեւորական, դա նախադեպ է, եւ դրանից աշխարհը չի քանդվել, հակառակը: Եկեղեցին համայնք է, որը կարող է ներկայացուցիչ ունենալ տարբեր մարմիններում, ես այդտեղ վատ բան չեմ տեսնում:

- Այժմ կոնկրետ ո՞ր հոգեւորականին կամ հոգեւորականներին եք պատկերացնում ակտիվ քաղաքականության մեջ: Ի վերջո՝ նրանցից ոչ բոլորն են ուզում կամ պատրաստ են քաղաքականությամբ զբաղվել:

- Քանի որ անձամբ ես նրանց չեմ ճանաչում քաղաքականության մեջ, կդժվարանամ հստակ գնահատականներ տալ, բայց, օրինակ, Միքայել եւ Բագրատ սրբազանները կարող են լինել քաղաքականության մեջ, ես եթե անգամ ինչ-որ քննադատական տեսակետ ունենամ նրանց քաղաքական գործունեության վերաբերյալ, բնականաբար, այս փուլում դրանք բարձրաձայնելուց զերծ կմնամ: Առհասարակ, այս փուլում եկեղեցականներին քննադատելուց պետք է հնարավորինս զերծ մնալ, անկախ բոլոր տարաձայնություններից: Եկեղեցին պետք է հիմա պաշտպանել:

- Հայտարարվել է, որ ՀԱԿ-ի վարչապետի թեկնածուն Լեւոն Զուրաբյանն է: Ի՞նչ եք կարծում՝ եթե ինչ-որ ուժերի հետ համագործակցության գնաք, դաշինք կազմեք, հնարավո՞ր է փոխվի ՀԱԿ-ի վարչապետի թեկնածուն, թե՞ ոչ:

- Եթե հնարավոր արդյունավետ դաշինք ձեւավորվի, մենք ճկուն ենք, եւ այդ հարցը բանակցելի կարող է լինել: Այնպես որ, եթե լավ դաշինք կազմվի, որը դրական արդյունք ցույց կտա, ապա այդտեղ մենք քարացած, կարծրացած դիրքորոշման վրա չենք մնա:

- Այս պահին կոնկրետ ո՞ր ուժերի հետ եք քննարկումներ ունենում:

- Քննարկումները լայն դիապազոնով շարունակվում են, եթե դրանք հասնեն արդյունքի, անպայման հասարակությունն այդ մասին կիմանա, իսկ եթե արդյունք չլինի, ի՞նչ իմաստ կա խոսել այդ մասին: Ակնհայտ է մի բան՝ բոլոր բանակցություններն ու կոնսուլտացիաներն ընդդիմադիր ուժերի հետ են, եւ այդտեղ չկա որեւէ կոնֆորմիստական ձգտում:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ Է. ԱՅՍ ԱՆԳԱՄ ԻՆՉՊԵՍ ԿԱՄ ԻՆՉՈՎ ԽԱԲԵԼ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Ի՞նչ խոստանալ հասարակությանը, ինչո՞վ խաբել մարդկանց, որ գնան եւ ընտրություն կատարեն հոգուտ պարտված եւ ձախողված իշխանության: Խոսքը միայն նախընտրական կարգախոսի մասին չէ, ընտրության գնացող ցանկացած կուսակցություն կամ դաշինք հասարակությանն ինչ-որ բան պետք է խոստանա, պետք է ասի՝ ինչի համար է ուզում իշխանություն ունենալ, իշխանություն ունենա, որ ինչ անի, ծրագիր, հանուն որի եւ որին հավատալով՝ մարդիկ պետք է այդ կուսակցությանը ձայն տան: Արդեն 8 տարի իշխանության մեջ գտնվող Փաշինյանին եւ ՔՊ-ին այդ խնդիրը շատ դժվար կացության առաջ է կանգնեցրել, հնարավոր բոլոր խոստումները տրվել են, եւ դրանից որեւէ մեկը չի կատարվել:

Փաշինյանը որոնումների մեջ է. մեկ խոստանում է այլեւս թույլ չտալ, որ նախկին նախագահները կամ օլիգարխները քաղաքականության մեջ դեր խաղան, խոստանում է նրանց դուրս շպրտել քաղաքականությունից, բայց դա այնքան մաշված ու բորբոսնած խոստում է, որ որեւէ մեկի վրա չի ազդում, էմոցիա չի առաջացնում: Նույն խոստումը տալիս էր 2021 թվականի ընտրությունների ժամանակ՝ չաղուճը ձեռքին, նախկինների նկատմամբ ատելություն գեներացնելով, բոլոր մեղքերը նրանց վրա բարդելով, բայց մարդիկ հասկանում են, որ Հայաստանի խնդիրը ո՛չ նախկին նախագահներն են, ո՛չ էլ խոշոր գործարարները: Նույնիսկ ատելությունը կարող է ժամկետանց լինել:

Խոստանալ խաղաղություն. մինչեւ վերջերս Փաշինյանը մտածում էր, որ ինքն ունի հաղթաթուղթ՝ եթե ուզում եք, որ երկիրը գտնվի խաղաղության մեջ, նոր պատերազմ չլինի, պետք է ինձ ընտրեք: Բայց սա ավելի շատ ոչ թե խոստում է, այլ՝ շանտաժ. մարդկանց շանտաժի ենթարկել, թե՝ եթե ինձ չընտրեք, պատերազմ կլինի, այնքան էլ արդյունավետ չէ: Բացի դա, շանտաժն աշխատում է շատ կարճ ժամանակի վրա, մի քանի շաբաթ կամ ամիս: Կարեւոր է, թե ինչի վրա է հիմնված խաղաղության խոստումը.

1. Այն, ինչ Ադրբեջանը եւ Թուրքիան մեզնից պահանջում էին, մենք արդեն տվել ենք, հիմնական պահանջը՝ միջանցքը, բավարարված է:

2. Մյուս բոլոր պահանջները եւս պատրաստ ենք բավարարել, եթե մենք իրենց պահանջները բավարարում ենք, ինչո՞ւ պետք է հարձակվեն Հայաստանի վրա:

3. Գտել ենք Հայաստանի անվտանգության արտաքին երաշխավոր՝ Միացյալ Նահանգները թույլ չի տա, որ Ադրբեջանը հարձակվի Հայաստանի վրա, քանի որ միջանցքի 74 տոկոսի փայատերն ԱՄՆ-ն է:

Եթե դու մարդուն խոստանում ես միայն ֆիզիկական անվտանգություն, որը հիմնված է թշնամուն հնազանդվելու եւ հպատակվելու վրա, դա արդեն ոչ թե նախընտրական խոստում է, այլ՝ պատիժ: Եթե Հայաստանի անվտանգությունը հիմնված է արտաքին երաշխավորի տված խոստման վրա, իշխանության եւ դրանում գործող անձանց դերը դառնում է զրոյական, ով էլ գա իշխանության, միեւնույն է՝ այդ երաշխիքը գործելու է, ԱՄՆ-ն Հայաստանի անվտանգությունը երաշխավորելու է ոչ թե հանուն Նիկոլ Փաշինյանի կամ մեկ այլ անձի, այլ հանուն այստեղ ունեցած իր շահի՝ Թրամփի միջանցքի:

Երեկ Փաշինյանը նոր խոստում հրապարակ նետեց. «Մենք այսօր զարգացման, ոչ թե գոյատեւման օրակարգի մեջ ենք»: Խաղաղությունը կամ անվտանգությունը գոյատեւման օրակարգն են, մարդուն ասում են՝ դու պետք է երջանիկ լինես, որ քեզ չեն սպանում, եթե դու դեռ կենդանի ես, շնչում ես, դա արդեն մեծ ձեռքբերում է: Հիմա ասում է, որ, չէ՝ մենք նաեւ զարգացման հեռանկար ունենք: Ողբերգությունն այն է, որ, որպես այդ զարգացման օրակարգի ապացույց, նա որեւէ կոնկրետ օրինակ չի նշում. ուղղակի չի կարող ասել՝ դրա գոյության բացակայության պատճառով: Ասում է, որ սերտում է պատմության դասերը, եւ հենց այդ պատճառով է, որ Հայաստանը զարգացման օրակարգի մեջ է: Ի՞նչ կապ ունեն պատմության դասերը զարգացման օրակարգի հետ, ինչպե՞ս կարող են պատմությունը կամ դրա դասերը զարգացում ապահովել: Պատմությունը կամ դրա դասերը առավելագույնը կարող են օգնել սխալներ չգործելուն:

Չնայած պատմության դասերը Փաշինյանը լավ չի հասկանում՝ նույնիսկ երրորդ հատորը կարդալուց հետո: Հայ ժողովրդի պատմության ամենամեծ դասն օտարի լծի տակ չմտնելն է, սեփական ազատությունը եւ ինքնիշխանությունը պաշտպանելն է: Հայոց պատմությունը սկսվում է աշխարհակալ Բելի դեմ Հայկի ապստամբությամբ, հայ մարդն ազատության ծնունդ է: Այսօրվա աշխարհակալ պետությունը Միացյալ Նահանգներն է, այն ժամանակվա Ասորեստանն այսօրվա Միացյալ Նահանգներն է, իսկ Բելը՝ այսօրվա Դոնալդ Թրամփը, բայց այսօր Հայաստանը եւ հայերին առաջնորդում է ոչ թե ազատության մարտիկ Հայկը, որը մարտահրավեր նետեց աշխարհակալությանը եւ պաշտպանեց իր ժողովրդի ազատության իրավունքը, այլ՝ մեկը, որը պատրաստ է ցանկացածի գերիշխանությունն ընդունել, հպատակվել ցանկացածին, միայն թե ապահովի իր ֆիզիկական գոյությունը:

Փաշինյանը Հայոց պատմությունն ուսումնասիրում է՝ ընդամենը հասկանալու համար, թե ինչ է գրվելու դրանում իր մասին, իր իշխանության տարիների մասին: Հուսադրող հետեւություններ չկան:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԱՍԵՆՔ՝ ՇՆՈՐՀԱՎՈՐ

Դրա, «Քաղպայմանագիր», էլ ոչինչ չկամ ասելու: Անելիք էլ, կարծես, չունեք: Ինչ ասելու էիք, ասել եք, ինչ անելու՝ արել: Ձեզ մի բան է մնացել անելու, այն էլ ձեր օգտի համար… Գլխիկոր հեռանալ: Դա էլ՝ եթե ժողովուրդը թույլ տա ու չպահանջի ձեզ հետ անել բաներ, որոնք այնքան էլ ստերիլ չեն: Մի խոսքով՝ ՔՊ-ի թեման փակված է:

Իմացա՝ «նորապսակներ» ունենք… Թող բարով վայելեն իրար, մի բարձի ծերանան, չորս երեխա ունեն՝ չորսն էլ թող ունենան: Ես չար մարդ չեմ: Ուղղակի չգիտեմ, թե ով պետք է կատարի նրանց եկեղեցական ամուսնությունը, նրանց հայտարարի մարդ եւ կին: Պարոն Կճոյան, ինչո՞ւ ես թաքնվում նախկին տեր Արամի թիկունքում: Դուրս արի, դուրս, դու նրա վտիտ մարմնի հետեւում էլ ես երեւում: Էս ի՜նչ փառահեղ տեսք ունես, այ մարդ… Մի՞թե չես կարող ՀՀ կառավարությանը կից ձեր հոգեւոր խորհրդով մի ձեւ գտնել՝ այդ զույգին եկեղեցով պսակելու: Առաջարկում եմ արարողությունը հենց կառավարության շենքում կատարել, շենքը շենք չի՞, ի՞նչ տարբերություն՝ գլխին ժամացո՞ւյց կա, թե՞ խաչ: Կարեւորն այն է, պարոն Կճոյան, որ դու դեռ կարգալույծ արված չես: Ուզում եմ ասել՝ շտապիր, քանի որ ՔՊ-ն վերջացել է, ու հնարավոր է՝ այսպիսի առիթ այլեւս չլինի՝ քծնելու ՔՊ առաջնորդին ու նրա տիկնոջը:

Ի դեպ, նվագողների հետեւից էլ պետք է մարդ ուղարկել: Մեկ էլ հանկարծ հարսանյաց հրավերներ կստանանք ու… Այ քեզ բա՛ն, նվագող չկա, բոլորն զբաղված են… Միայն թմբուկով նվագ կլինի՞: Ամբողջ հարսանիքը հարամ կանի գլխներիս, մի բաժակ բան էլ չի թողնի խմենք: Իսկ հարսանիքի ծրը: Տեսնես՝ որոշե՞լ են: Մարտին լավ չի, մարտի 1 կա, բան կա… Մայիսին հարսանիք չեն անում, սովորաբար: Մնաց ապրիլը: Ավելի ճիշտ՝ ապրիլի սկզբին, որովհետեւ հետո գալիս է Ապրիլի 24-ը, ապա՝ քաղաքացու օրը… Ի՞նչ իմանաս, թե ինչ կլինի Ապրիլի 24-ին, երբ ժողովուրդը բարձրանա Ծիծեռնակաբերդ ու տեսնի քարուքանդ արված համալիրը: Բա որ իմ խելքին էլ բրթի՝ պահանջել բարձրաստիճան պաշտոնյաների գրառումների գիրքն ու ստուգել Վենսի գրառումը: Պատկերացնո՞ւմ եք, որ Վենսն իսկապես օգտագործած լինի «Ցեղասպանություն» եզրույթը, ու ինչ-որ չուզողներ տակով արած լինեն: Կռիվը նաղդ ա… Իմ կարծիքով՝ ապրիլի 7-ն է ամենահարմար օրը: Համ էլ թոշակները ստացած կլինենք, ծաղիկ ա, նվեր ա, բան ա, բոլ-բոլ կառնենք: Այլապես չգիտենք ոնց ծախսել մեր կառավարության շռայլած այդ փողը:

Արա, ՔՊ, զգացի՞ր, որ քեզ խոսք չի հասնում էս գործում: Հա, հարսանիքի օրը հենց ժողովուրդն է որոշելու, ոչ թե դուք: Ձեր էդ «նամյոկները», թե հարսանիքը հունիսի 7-ին անենք, չեն անցնի: Լրիվ քաղաքականացնում եք արդեն: Ուզում եք ժողվարչապետի հաշվին համ քեֆ անեք, համ ընտրվե՞ք: Մոռացեք այդ մասին: Տեսանք, թե ինչպես էիք ձեր ներքին ընտրություններում քվեարկել նրա օգտին: Հապա մի բացահայտվեք, քանի՞ հոգի էր թռել ու «դեմ» քվեարկել «տիրոջը»: Նա, ինչ է՝ հողատու էր, դավաճան էր, ստախոս էր, ուրիշի վասմ՞ էր ձեզ համար, որ դեմ քվեարկեցիք: Հիմա էլ թաքնված՝ ուզում եք հունիսի 7-ին ուտել-խմե՞լ: Չի լինելու:

Ժողովուրդ ջան, ինչ էլ անելու լինենք, «նորապսակ» զույգին պետք է փառքով ճանապարհենք: Ի վերջո՝ վարչապետ ու վարչապետակին են, կարեւոր հանգամանք ունեն: Նրանք հո շարքային ՔՊ-շնիկ չեն, որ քրեական հետապնդում հարուցեք, տնային կալանք տաք, «ելքը» փակեք, բանտ նստեցնեք: Այս ամեն ինչը պահեք շարքային ՔՊ-շնիկների համար: Կաթողիկոսի հետ պատահածն էլ աչքս մի մտցրեք: Դա հո վարչապետը չի՞ արել… Իրեն պարտադրել են: Ալիեւն ա պարտադրել, Փաշազադեն ա պարտադրել, Էրդողանն ա պարտադրել… Ինձ թվում է՝ Թրամփի եւ Պուտինի մատն էլ է խառը այդ գործում: Նրա մեղքն այն է միայն, որ չի կարողացել դիմադրել: Այլապես պաշտոնից կգրկվեր, իսկ այդ պաշտոնը նրա համար խիստ թանկ էր, որովհետեւ, ժողովուրդ ջան, դու էիր նրան այդ պաշտոնը տվել:

Ուրեմն, պայմանավորվեցինք՝ հարսանիքի հաջորդ օրը… Տո չէ, այ Շմավոն ջան, ինչ «կարմիր խնձոր»,

վերջ տուր… Հարսանիքի հաջորդ օրը «նորապսակներին» ուղարկում ենք հարսանեկան ճամփորդության, պայմանական ասած՝ արտասահման, եւ երկար, շատ երկար ժամանակով: Թողեք, թող մի կուշտ վայելեն իրար: Մենք պիտի ձեռնպահ մնանք նախկին ղեկավարին հալածելու նախադեպ ստեղծելուց: Ոչինչ, որ ինքը դա արել է, ձեզ ասում եմ՝ ոչինչ: Դա էլ են իրեն պարտադրել: Ո՞վ… Տո հենց Լեւոն Տեր-Պետրոսյանը, որի գործերին իր հաջորդներն այդպես էլ քաղաքական գնահատական չտվեցին: Մեծահոգի էին Լեւոն Տեր-Պետրոսյանի հաջորդները եւ, պատկերացրեք, ճիշտ վարվեցին: Սրան էլ թողնենք՝ գնա: Մեղքի տակ չընկնենք, միեւնույն է, մի օր եւ մի տեղ ամեն ինչ ավարտվում է բոլորի համար:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՔՐԴԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ Է ԻՐԱՔԻ, ԹՈՒՐՔԻԱՅԻ, ԻՐԱՆԻ, ՍԻՐԻԱՅԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

*«Հրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Արա Պողոսյանն** է:*



- Մյունխենի անվտանգության համաժողովում այս տարի եւս թույլ չտվեցին ԻԻՀ-ի արտգործնախարար Աբաս Արաղչին խոսի: Մինչդեռ ելույթ ունեցավ Իրանի ընդդիմության ղեկավարներից Ռեզա Փահլավին: Նրա համախոհները նույն օրը ցույցեր կազմակերպեցին՝ Գերմանիայից մինչեւ Լոս Անջելես: Իրանական ընդդիմությունն արտերկրում ավելի ազդեցիկ ու վճռակա՞ն է դառնում:

- Համապարփակ կարծիք ձեւավորելու համար անհրաժեշտ է նախ հաշվի առնել, որ ժամանակակից իրանական սփյուռքը՝ հատկապես ԱՄՆ-ում, ԵՄ երկրներում, ձեւավորվել է Իսլամական հեղափոխության արդյունքում Իրանից հեռացած միապետականներից, ինչպես նաեւ՝ դեռեւս շահական իշխանության ժամանակ ընդդիմադիր դիրքերից հանդես եկող Իրանի դիմադրության ազգային խորհուրդն է (NCRI), որի առանցքը կազմում է «Մոջահեդին-ե Խալկ» (MEK) կազմակերպությունը: Այն միաժամանակ թե՛ միապետության եւ թե՛ Իսլամական Հանրապետության դեմ է հանդես գալիս: Այսինքն՝ իրանական սփյուռքը միատարր չէ, եւ նախկին շահի որդու շուրջ համախմբված զանգվածը գլխավորապես նախկինում շահական իշխանության հետ սերտ կապեր ունեցած մարդիկ են: Բազմաթիվ են տեղեկությունները, որ այս հանրահավաքներին աջակցում են տեղական իշխանությունները, եւ այն Իրանի Իսլամական Հանրապետության դեմ համակարգված պայքարի կարեւորագույն բաղադրիչն է: Այս համատեքստում է նաեւ արքայազն Ռեզա Փահլավիին Մյունխենի անվտանգության համաժողովին հրավիրելը, նրան լեգիտիմացնելը՝ որպես միջազգային հարաբերություններում ընկալելի կերպար: Սակայն չի կարելի ասել, որ իրանական ընդդիմությունը դառնում է արտերկրում ավելի ազդեցիկ, քանի որ այն հենց այդ երկրների համապատասխան քաղաքականության արդյունքն է եւ ոչ հակառակը:

- Իրանում բողոքի ցույցերը չեն դադարում. ծայրահեղ տրամադրություններ, ատելության խոսք, գերագույն առաջնորդին ուղղված սպառնալից կարգախոսները նոր թափ են ստացել: Հակակառավարական հավաքների մասնակիցները վստահ են՝ սա իրենց վերջին մարտն է, եւ վերջին շահի աքսորյալ որդին՝ Փահլավին, վերադառնալու է հայրենիք: Ի՞նչ սպասել առաջիկայում:

- Այս փուլում, կարծում եմ, Իրանում հաղթահարված է ներքին ճգնաժամի ծայրահեղ սպառնալից փուլը: Ավելին՝ արտաքին ճնշումը հանգեցրել է իշխանությունների շուրջ ներքին համախմբվածության: Թեպետ ակնհայտ է, որ կան խնդիրներ, որոնք հարուցված են արտաքին դերակատարների կողմից՝ օրինական իշխանության տապալման նպատակով: Ամեն դեպքում, հաշվի առնելով իրանական առանձնահատկությունները եւ այն, որ իրանական հասարակությունն իդեոլոգիականացված հասարակություն է, կարծում եմ՝ միայն ներքին ռեսուրսներով հնարավոր չէ երկրում իշխանության տապալումը: Դրա կարեւորագույն ցուցիչներից մեկն այն է, որ բացակայում է պառակտվածությունն էլիտաների մեջ, ինչը ցուցիչ է, որ ընդդիմությունը չունի երկրում ոչ սոցիալական հենարան եւ ոչ էլ՝ քաղաքական: Մյուս կողմից՝ Ռեզա Փահլավին, որպես առաջնորդ, բավականին թույլ է, չունի անձնական այնպիսի խարիզմա, որն իր շուրջ կհամախմբեր իրանական հասարակությանը:

- Դիցուք, եթե հարեւան Իրանում հեղափոխություն իրականացվի, դա ինչ հետեւանքներ կարող է ունենալ հայ-իրանական հարաբերությունների վրա: Առհասարակ, Փահլավին ինչպիսի՞ հարաբերություններ ունի, օրինակ, ԱՄՆ-ի հայ շրջանակների հետ, որեւէ ժամանակ արտահայտվե՞լ է Հայաստանի հետ հարաբերությունների ձեւաչափի, տեսլականի մասին:

- Անկախ նրանից, թե ինչպիսի իշխանություն կլինի Իրանում, մենք չենք կարող եւ իրավունք չունենք իրանական ժողովրդի որոշմանը հակադրվել: Ով էլ լինի իշխանություն Իրանում, մենք պետք է շարունակենք բարեկամական քաղաքականությունը: Ինչ վերաբերում է Ռեզա Փահլավիին, ապա մի բան է իշխանության լծակներ տիրապետող եւ մեկ այլ բան է վտարանդիության մեջ գտնվող մարդու կարծիքը կամ պատկերացումները տարածաշրջանային քաղաքականության մասին: Հետեւաբար, անպտուղ եմ համարում այս պահին քննարկելը, թե Ռեզա Փահլավին ինչ պատկերացումներ ունի հայ-իրանական հարաբերությունների մասին:

- ԻԻՀ-ն դիմագրավում է նաեւ իր գլխավոր ախոյանների՝ ԱՄՆ-ի եւ Իսրայելի մեծացող ճնշմանը՝ կապված միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների հետ: Եթե Թրամփը լավատեսություն է հայտնում Թեհրանի հետ գործարք կնքելու առումով, ապա վարչապետ Նեթանյահուն նման հնարավորություն տեսնում է 3-4 նախապայմանների կատարման դեպքում՝ հարստացված ուրանի ամբողջական դուրսբերումից մինչեւ ռեգիոնալ պրոքսի ուժերին աջակցությունից հրաժարում: Թեհրանն ասում է, որ նման հարցերի շուրջ չի բանակցում: Ո՞ւր կտանի այս հակադրությունը:

- Լայն առումով, թե՛ ԱՄՆ-ն, թե՛ Իսրայելն արդեն որոշել են այն կոնֆիգուրացիան, որը պետք է ձեւավորվի՝ իրանական պետության էության տրանսֆորմացիա՝ իսլամականից դեպի աշխարհիկ: Սա ենթադրում է, որ ԱՄՆ-ն եւ Իսրայելն ամեն ինչ փորձելու են անել, որպեսզի Իրանը վերադառնա մինչհեղափոխական քաղաքակրթական-գաղափարական առանցքին: Իսկ դա նշանակում է Իրան, որը, ըստ ամերիկյան պատկերացումների, պետք է լինի ԱՄՆ-ի կարեւորագույն հենակետը Եվրասիայում՝ միաժամանակ հակակշռելով ռուսական եւ չինական ազդեցությանը:

- Նկատե՞լ եք, որ Իսրայելում սկսել են լրջորեն նախազգուշացնել թուրքական CENK բալիստիկ հրթիռի մասին, որի գործողության շառավիղը հասնում է 2000 կիլոմետրի: Փաստորեն, կարծում եք, որ Իսրայելի ողջ տարածքը հայտնվում է այս հրթիռի խոցման տիրույթում, ինչը կարող է փոխել ուժերի տարածաշրջանային հավասարակշռությունը: Իսրայել-Թուրքիա լարված հարաբերությունների պայմաններում Անկարան կգնա՞ արկածախնդիր քայլի՝ հրո՞ ճարակ դարձնելով տարածաշրջանը:

- Վերջին շրջանում նկատելի է Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ ակտիվ ագրեսիվ արտաքին քաղաքականությունից դեպի Դավութօղլուի «Զրո խնդիր հարեւանների հետ» 2.0 կոնցեպտ, որտեղ, ի տարբերություն նախկինի, ոչ թե Թուրքիան գնում է փոխզիջումային արտաքին քաղաքականության, այլ հարկադրման միջոցով է փորձում ապահովել «Զրո խնդիր հարեւանների հետ»: Հայաստանն այդ քաղաքականության ամենացայտուն օրինակն է: Հետեւաբար, չեմ կարծում, որ այս փուլում Թուրքիան պատրաստ է ռազմական գործողություններ սկսել Իսրայելի դեմ: Ընդհակառակը՝ իսրայելական ռազմական դոկտրինը ենթադրում է պրոակտիվ կանխարգելիչ ռազմավարական զսպման քաղաքականություն, ինչը ենթադրում է, որ Իսրայելի կողմից այս փուլում ավելի հավանական են որոշակի զսպման գործողություններ: Իսկ Թուրքիան հակահիսրայելական իր ռազմավարությունը փորձում է իրացնել Սիրիայի եւ Գազայի միջոցով:

- Զուգահեռաբար, Թուրքիան փորձում է որոշակի ազդեցություն ունենալ Վաշինգտոնի վրա, համոզելով Թրամփի վարչակազմին՝ ետ կանգնել Իրանի դեմ ռազմական հարձակման սցենարից, ընտրելով դիվանագիտական երկխոսության ճանապարհը: Որքանո՞վ է այս հարցում Անկարան անկեղծ:

- Այս պահին Իրանի եւ Թուրքիայի միջեւ կա շահերի իրավիճակային համընկնում: Դա պայմանավորված է քրդական գործոնով: Ընդհանրապես, Մերձավոր Արեւելքում քրդական գործոնը միակն է, որը մի սեղանի շուրջ է հավաքում միաժամանակ Իրաքի, Թուրքիայի, Իրանի եւ Սիրիայի իշխանություններին: Նույնը այս պարագայում է՝ Թուրքիայում վստահ են, որ քրդական սեպարատիզմը իրանական իշխանության տապալման դեպքում կդառնա դոմինանտ շարժում, ինչը կարող է տարածաշրջանում քրդական շարժումների նոր զարթոնք առաջ բերել, ինչպես ժամանակին Սիրիայում սկսվեց քրդական լայն մոբիլիզացիա: Հետեւաբար կարծում եմ, որ այս մասով Թուրքիան իսկապես շահագրգռված է Իրանում որոշակի կանխատեսելի վիճակով, բայց ոչ ավելին: Այս իմաստով հատկանշական է Թուրքիայի ԱԳ նախարար Հաքան Ֆիդանի վերջին հարցազրույցը, որտեղ նա ասում էր, որ եթե տարածաշրջանում միջուկային զենքի առկայություն լինի, ապա Թուրքիան ստիպված կլինի միանալ միջուկային մրցավազքին:

Արա ԱԼՈՅԱՆ

ՄԻ ԳՈՐԾՈՎ ՄԵՂԱԴՐՅԱԼ Է, ՄՅՈՒՍՈՎ՝ ՏՈՒԺՈՂԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ

Արմեն Միշայի Էդիլյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա եւ Կարեն Գրիգորի Սարգսյանը, հանդիսանալով պաշտոնատար անձինք՝ հետաքննության մարմնի աշխատակիցներ, զբաղեցնելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հետաքննության եւ օպերատիվ-հետախուզության վարչության 14-րդ բաժնի գլխավոր օպերլիազորի պաշտոնները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնելու, հարկային իրավախախտումների վերաբերյալ առկա տեղեկությունների, ինչպես նաեւ հարկային հանցագործությունների կատարման մասին վկայող այլ փաստերի եւ հանգամանքների առկայության դեպքում համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով, 2026 թ. հունվարի 12-ին այցելել են Ստեփանավան քաղաքի Գարեգին Նժդեհի 4/1 հասցեում գտնվող՝ անհատ ձեռնարկատեր Արմեն Մանվելի Ալեքսանյանի եւ նրա եղբոր՝ Արտակ Մանվելի Ալեքսանյանի կողմից օգտագործվող «Օվսաննա» հանրախանութ, որտեղ նրանց օգտին հովանավորչության եւ ապօրինի անգործության, այն է՝ նշված հանրախանութում ստուգումներ չիրականացնելու, սուպերմարկետը ժամանակավորապես չփակելու, առեւտուրը չարգելելու... խախտումներ լինելու դեպքում դրանք չարձանագրելու եւ տուգանք չնշանակելու համար, նախնական համաձայնությամբ խմբի կազմում Արմեն Ալեքսանյանից եւ Արտակ Ալեքսանյանից պահանջել են մինչեւ տվյալ աշխատանքային օրվա ավարտը տալ առանձնապես խոշոր չափերով՝ 9 մլն դրամ կաշառք:

Արմեն Էդիլյանին եւ Կարեն Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 435 հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով («Կաշառք ստանալը, որը կատարվել է դատավորի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի կողմից») եւ նույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով («Կաշառք ստանալը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով»): Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը: Փետրվարի 13-ին քրեական գործը մակագրվել է Հակակոռուպցիոն դատարանի դատավոր Լեւոն Պետրոսյանին:

Արմեն Էդիլյանը եւ Կարեն Սարգսյանը Իջեւանի բնակիչներ են: Տավուշի ընդհանուր իրավասության դատարանում՝ դատավոր Սամվել Մարդանյանի նախագահությամբ, Արմեն Էդիլյանի երեխային առնչվող քրեական գործ է քննվում: Շինարար բանվոր, 1983թ. ծնված Ս. Էդիլյանը մեղադրվում է իր հարեւան, ազգակից Արմեն Էդիլյանի մակահասակ որդու մանկապղծության մեջ: Ս. Էդիլյանը 2 ամիս եղել է կալանքի տակ, հետո նրա խափանման միջոցը փոխվել է բացակայելու արգելքով: 3 երեխայի հայր Էդիլյանը կտրականապես ժխտում է իրեն առաջադրված մեղադրանքը, ասում է, որ քրեական գործով նշանակված երկու փորձաքննությունների արդյունքներն ապացուցում են այդ գործով իր անմեղությունը: Ներկայում դատարանում գործով վկաների հարցաքննության փուլն է ընթանում: Այդ քրեական գործով դատավարության հաջորդ նիստը նշանակված է փետրվարի 24-ին: Քանի որ քրեական գործն առնչվում է մանկահասակ երեխայի, տեղեկատվությունը «Դատալեքս» տեղեկատվական համակարգում սահմանափակված է:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ՎԱՆՔ

ԽՈՒՃԱՊԻ ՎԱՆՔԸ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԵԶՐԻՆ Է. Ո՞Վ ԿՓՐԿԻ 13-ՐԴ ԴԱՐԻ ԳՈՀԱՐԸ

Դեկտեմբերի 5-ին ՀՀ Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայության տնօրեն Արմեն Հովհաննիսյանը մամուլի ասուլիսում ասել է. «Պատմամշակութային ժառանգության պահպանությունը մեզ համար երկարաժամկետ պատասխանատվություն է՝ պետության, հասարակության եւ ապագա սերունդների առաջ»: Նաեւ ընդգծել է, որ ծառայությունը կենտրոնացել է ոլորտում առկա խնդիրների կառավարման եւ համակարգված լուծումների վրա, 2025 թվականը ծանրաբեռնված, բայց արդյունավետ տարի էր՝ իրականացվել են խոշոր միջոցառումներ, պեղումներ, վերականգնման ու ամրակայման աշխատանքներ:

Այս խոսքերի ֆոնին աչքերիս առաջ հառնեց մութ անտառում, զմրուխտե առվակի հարեւանությամբ կանգուն, բայց կործանվող մի հրաշք՝ Խուճապի վանքը: Սպասում էի, որ ոլորտի պատասխանատուն մտահոգություն կհնչեցներ այս վանքի մասին, ծրագրերի մասին խոսք կասեր, բայց դրանք չհնչեցին: Հարցուպատասխանի ավարտին լրագրողները ստացան շնորհակալագրեր ու խորհրդանշական նվերներ: Տնօրենը նշեց. «Լրատվամիջոցները պարզապես տեղեկատվություն փոխանցողներ չեն. դուք վստահության եւ երկխոսության կամուրջ եք ձեւավորում»:

Ես էլ որոշեցի իսկապես այդ «կամուրջը» ձեւավորել՝ զանգահարեցի հարգարժան տնօրենին՝ ծառայությունը տեղյամ է Խուճապի վանքի «խուճապային» վիճակից, ի՞նչ է նախատեսվում դրա փրկության համար: Պարզվեց՝ այս պահին հստակ տեղեկատվություն չունի, թե ինչ ծրագրեր ունի ԿԳՄՍ նախարարության Հուշարձանների պահպանության վարչությունը: Ապա շեշտեց՝ Խուճապի հիմնահարցը միակը չէ, այսօր Հայաստանում շուրջ 600-700 պատմաճարտարապետական կոթողներ գտնվում են անմխիթար վիճակում: Խուճապը դրանցից մեկն է: Բայց Խուճապն առաջնահերթ օգնության կարիք ունի:

Պայմանավորվեցինք՝ ես «Հրապարակ» օրաթերթի էջերում կներկայացնեմ վանքի աղետալի վիճակը, իսկ իր գլխավորած ծառայությունը հարցը կներկայացնի «ուր որ հարկավոր է», եւ կհաղորդեն, թե ինչ միջոցներ են ձեռնարկելու:

Ահա՝ կատարում եմ իմ խոստումը: Խուճապի վանքը XIII դարի հուշարձան է՝ պատմական Գուգարքի Բեղնափոր գավառում: Այսօր այն գտնվում է Լոռու մարզում՝ Պրիվոլնոյե գյուղից 23 կմ հեռավորության վրա, Լալվար լեռան հյուսիսային լանջին, անտառի խորքում: Վանք հասնելը փորձություն է: Մեքենայով գնալու դեպքում պետք է հատել Հայաստան-Վրաստան սահմանը առնվազն չորս անգամ՝ բացատրելով, թե ուր ես գնում եւ ինչ նպատակով, որքան ժամանակով: Այլ ճանապարհներ էլ կան, որոնք հնարավորություն են տալիս տեղ հասնել առանց սահմանահատումների: Դրանք կարելի է անցնել միայն ոտքով. Թումանյանի տարածաշրջանի սահմանամերձ Ջիլիզայից կարելի է կտրել մոտ 7 կմ անտառի դժվարանցանելի լեռնալանջերով արահետները (եթե չկան՝ պիտի արահետ բացել), մյուսը՝ հիմնականում ռուսներով բնակեցված Պրիվոլնոյեից անցնել 17-18 կմ գրեթե անանցանելի, ավտոմոբիլների համար 60 տարի առաջ կառուցված եւ նորոգման երես երբեք չտեսած ճանապարհով, հասնել հայ-վրացական սահման, մեքենան թողնել մեր սահմանում որեւէ հարմար տեղ եւ դարձյալ անտառային արահետներով, ոտքով հասնել վանք:

Վերջապես՝ անտառի մեջ ձեր աչքի առջեւ կշողշողա վանական ամբողջ համալիրից միակ կանգուն, բայց խարխլված եկեղեցին: Այն 13-րդ դարի զույգ գմբեթավոր, ութանիստ մույթերով կառույց է: Բարձրադիր թմբուկը զարդարված է կամարաշարով, յուրաքանչյուր նիստում՝ բարձր լուսամուտներ, կամարներից վեր՝ կենդանական քանդակներ: Հուշարձանն աչքի է ընկնում հարուստ զարդարանքով ու գունագեղությամբ: Բայց այդ գեղեցկությունը քայքայվում է: Կից դահլիճի եւ օժանդակ շինությունների պատերը մասամբ փլված են: Ծածկերը՝ հողով ու քարով լցված: Ճակատային հատվածներում մեծ մակերեսներով պոկված են երեսաքարերը, զարդաքանդակ քիվերը վնասված են:

Մոտակա հայաբնակ Աղքյորփի գյուղի բնակիչ Իշխան Աթաբեկյանը մեզ պատմեց, որ եկեղեցու դռան վերեւում հայերեն արձանագրություններ են եղել, այսօր չկան՝ քերված են: Եկեղեցու ներսում հատակի փոխարեն աճյունաքարեր են եղել: Տեսանք միայն մեկը՝ տեղահանված, կիսաջնջված գրությամբ: Տեսանելի են նաեւ կիսակործան այլ շինություններ: Տարիներ առաջ համալիր էի այցելել Հուշարձանների պահպանության Լոռու տարածքային ստորաբաժանման աշխատակից Հրաչ Մարուքյանի հետ: Միասին առաջարկներ էինք ներկայացրել «համապատասխան» ծառայությունների ու կառույցների ղեկավարներին: Նրան կրկին հարցրի՝ ինչ է փոխվել: Պատասխանը հակիրճ էր՝ ոչինչ:

Պրիվոլնոյե համայնքը, ըստ օրենքի, պարտավորություն ունի զբաղվելու իր վարչական տարածքում գտնվող հուշարձանի պահպանությամբ, բայց հնարավորությունները սահմանափակ են: Համալիրը հեռու է, ճանապարհը՝ դժվարանցանելի: Այստեղ անհրաժեշտ է պետական համակարգված միջամտություն: Խուճապի վանական համալիրը պարզապես հուշարձան չէ: Այն մշակութային հիշողություն է, պատմություն է, մեր ինքնությունն է: Եթե հիմա չմիջամտենք, այն կհալվի, կկորչի անտառի խորքում՝ անտեսված ու մոռացված:

Ծառայության տնօրեն Արմեն Հովհաննիսյանը խոստացել է հետեւել մեր հրապարակմանը եւ հարցը ներկայացնել համապատասխան ատյաններին: Հիմա հերթը «պատասխանատուներինն» է: Խուճապի վանքը սպասել չի կարող:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

1838 Թ. ԴՅՈՒՎՈՆՏԵԻ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՖՐԱՆՍԵՐԵՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՎ Է

19-րդ դարի վերջին Փարիզում՝ Սեն-Ժակլ փողոցում գործում էր «Մեզոն Բասե» տպագրատունը: Դարավերջին այն արդեն կորցնում էր դիրքերը: Ձեռքի աշխատանք փորագրությունների դարաշրջանը մոտենում էր մայրամուտին: Սակայն 1875-79 թթ. այդ հրատարակչատանը հրատարակվում է ատլաս՝ «Հավելում ժամանակակից հանրագիտարանին» վերնագրով: Այդ ատլասում մի քանի հարյուր քարտեզ կար, որոնց շարքում կար նաեւ Հայաստանի քարտեզը, որը պատրաստել էր Թյուլոն Դյուվոնտեն: Դյուվոնտեի մասին քիչ բան է հայտնի: Գիտենք միայն, որ ծնվել է 1796 թվականին, ապրել մոտ 80 տարի: Նրա աշխատանքը գրեթե երեւացող չէր՝ նոր աշխարհներ չի հայտնագործել, ոչ էլ էքսպեդիցիաներ է գլխավորել: Դրա փոխարեն պղնձե տախտակների վրա քարտեզների գրավյուրներ է իրականացրել՝ իրապես քրտնաջան աշխատանք այն ժամանակների համար, որը պահանջում էր լավ տեսողություն եւ ուժեղ ձեռքեր:

Աշխատել է իր ժամանակի ֆրանսիացի լավագույն քարտեզագիրների թիմի հետ՝ Բարբյե դու Բոկաժ, Վյումեն, Շառլ, Լեւասյոր եւ Դյոֆյուր: Նրանք՝ բոլորը, քարտեզներ են պատրաստել փարիզյան նույն հրատարակչատների համար, որոնք չափերով մեծ չէին, ծալովի էին՝ նախատեսված մասսայական ընթերցողի համար: Նրանց աշխատանքները գնում էին դպրոցները, պաշտոնյաները, առեւտրականները եւ այլք: Դյուվոնտեի քարտեզները տպագրվում էին ֆրանսիական հայտնի Ֆիրմեն Դիդոյի հրատարակչությունում: Դիդոները հրատարակչական գործի մեջ էին՝ սկսած 18-րդ դարի սկզբից: 19-րդ դարի կեսերին Ամբրուազ եւ Գիացինտ Դիդո եղբայրները մեծահարուստների համար նախատեսված թանկարժեք հրատարակություններից անցում են կատարում լայն հասարակության համար նախատեսված հանրագիտարանների տպագրության: 1846-79 թթ. հրատարակում են «Ժամանակակից հանրագիտարանը»՝ իր հավելվածներով, նաեւ՝ ատլասներով: Ու դա պատահականություն չէր, ոչ էլ զուտ միայն բիզնեսի վերակազմակերպում: Բանն այն է, որ Ամբրուազ Դիդոն երիտասարդ տարիքում աշխատել էր որպես դիվանագետ Ստամբուլում: Նա ճամփորդել է Հունաստանով եւ Փոքր Ասիայով, նույնիսկ հայտնաբերել հնագույն Պերգամոն քաղաքի ավերակները: Երբ վերադարձել է Ֆրանսիա, սկսել է զբաղվել տպագրական գործով եւ լավ է հասկացել, թե ինչքան կարեւոր ու գրավիչ կարող են լինել Արեւելքն ու արեւելյան պատկերները:

Դյուվոնտեն Հայաստանի քարտեզը պատրաստել է 1878 թվականին: Այդ ժամանակ նոր էր ավարտվել ռուս-թուրքական պատերազմը: Սան Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին զգալի տարածքներ էին անցել պատմական Հայաստանից: Եվրոպական տերություններն անհանգստացած էին դրանից, քանի որ Մերձավոր Արեւելքում դրանով խախտվում էր հին հավասարակշռությունը, եւ այդ իրավիճակում տվյալ ռեգիոնի ցանկացած քարտեզ դառնում էր քաղաքական կարեւոր փաստաթուղթ:

Ի դեպ, 1878-ի Հայաստանի քարտեզը Դյուվոնտեի համար առաջինը չէր: Դեռ 1838 թվականին նա կազմել էր Հայաստանի քարտեզը՝ հին քաղաքներով եւ տեղանուններով: Դյուվոնտեի քարտեզում Հայաստանը մի լեռնաշխարհ է՝ երեք խոշոր լճերով. Վան, Սեւան եւ Ուրմիա: Արարատ լեռը տեղորոշված ու նշված էր հստակ: Քաղաքների անվանումները ֆրանսերեն էին, պահպանված տեղական հնչողությունը՝ Կարս, Երզրում, Էրեւան, Դիարբեքիր: Տեղանունները գրանցվում էին տվյալ պահին լսածի հիման վրա, հաճախ՝ իսկական անվան աղավաղումով: Դա, ի դեպ, եվրոպական քարտեզագրության՝ Արեւելքի քարտեզագրման հիմնական խնդիրներից էր: Ասում են, երբ Դյուվոնտեն մեռնում է, նրա մասին թերթում մի քանի տողանոց հայտարարություն է միայն տպագրվում, իսկ ընդամենը երկու տասնամյակ անց նրան սկսում են շփոթել մեկ այլ անձի՝ Շառլ Դյուվոնտեի հետ, որը եւս զբաղվել է քարտեզներով:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՄՈԹ. ՔՐԳՈՐԾ ՀԱԵ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԴԵՄ



Իտալական ilgiornaleditalia պարբերականի մեկնաբան Սիմոնե Լանցան անդրադարձել է Գարեգին 2-րդի դեմ հարուցված քրգործին: Նշում է, որ օգտագործելով ֆորմալ մեղադրանքը՝ դատական ակտի կատարմանը խաթարելը, Նիկոլ Փաշինյանը փորձում է ասպարեզից հեռացնել իր գլխավոր քաղաքական մրցակցին: Եվ ամեն բան սկսվել է ներեկեղեցական վեճից՝ Գարեգին 2-րդն աստիճանազրկել է եպիսկոպոս Արման Սարոյանին՝ հնազանդության ուխտը խախտելու համար: Սարոյանը մեկն է այն 10 «ապստամբ» եպիսկոպոսներից, ովքեր կանգնել են կառավարության կողքին՝ Եկեղեցու հետ հակամարտության ընթացքում: Դատարանը բավարարել է նրա պահանջը: Ապա քննություն է սկսվել՝ կաթողիկոսի ու նրա գրասենյակի դատական ակտի կատարմանը միջամտելու առիթով. 6 բարձրաստիճան եկեղեցական կանչվել են հարցաքննության իտալացի հեղինակը. աշխարհիկ իշխանություններն օգտագործել են վարչական լծակները՝ միջամտելու զուտ ներեկեղեցական գործերին: Օրենսդրական կարգավորումներն այնքան լայն են, որ հարմար գործիք են դարձել՝ անընդունելի կրոնական առաջնորդի դեմ ճնշումներ բանեցնելու համար: Մինչդեռ եկեղեցու առաջնորդի իրավունքները բխում են կանոնական իրավունքից եւ ոչ թե գործադիր որոշումներից: Մեջբերված է իրավապաշտպան Ռուբեն Մելիքյանի գնահատականը, որն այս ամենը Հայաստանի համար պատմական խայտառակություն եւ ակնհայտ քաղաքական հետապնդում է անվանում:

Հեղինակը հիշում է, որ 2025 թվականի ընթացքում Հայաստանի վարչապետը մեղադրել է կաթողիկոսին՝ «ռեւանշիստական շրջանակների նկատմամբ ունեցած համակրանքի եւ Ադրբեջանի ու Թուրքիայի հետ հաշտեցմանը խոչընդոտելու մեջ»: Մեղադրանքները լուրջ են, իհարկե, սակայն խեղաթյուրում են իրականությունը՝ Հայ առաքելական եկեղեցին չի կարող աջակցել ռազմական հակամարտության շարունակմանը, քանի որ դա հակասում է Սուրբ գրքին եւ Քրիստոսի պատգամներին: Գարեգին 2-րդը միավորում է հասարակության այն շերտերը, որոնք կտրուկ դեմ են հանդես գալիս երկրի կապիտուլյացիային եւ պահանջում են ոչ կոմպետենտ ղեկավարի հրաժարականը: Եկեղեցու եւ կառավարության միջեւ հակամարտության հիմքում Լեռնային Ղարաբաղի հարցն է: Հոդվածում նշվում է, որ մոտ 3 տասնամյակ գոյատեւած Ղարաբաղը կշարունակեր գոյությունը, եթե չլինեին Փաշինյանի գործողությունները եւ Ադրբեջանի կողմից ագրեսիան: Խոսքը 2020-ի պատերազմի մասին է: Երբ Բաքուն սկսել է հաղթել, Ռուսաստանը միջամտել է, առաջարկելով հաշտության գնալ, պայմանով՝ Երեւանը թույլ կտա, որ ադրբեջանցի փախստականները վերադառնան Շուշի՝ քաղաքի վերահսկողությունը մնա հայերին, սակայն Փաշինյանը որոշել է մերժել եւ շարունակել պայքարը, իսկ 1 ամիս անց կորցրել է եւ Շուշին, եւ մյուս տարածքները: Փաշինյանի անհեռատես գործողությունները հանգեցրել են ամբողջական պարտության ու հայերի տեղահանության: Այժմ Բաքուն, գիտակցելով իր գերակշիռ դիրքը, սպառնում է Հայաստանի տարածքային ամբողջականությանը: Երեւանը շարունակում է զիջումներ անել՝ ավելի ու ավելի խճճվելով իր դեմ լարված ծուղակում:

Եկեղեցին ու կաթողիկոսը դեմ են հանդես եկել այդ քաղաքական գծին, եւ վերջին մեկ տարվա ընթացքում իշխանությունները ճնշում են գործադրում Եկեղեցու ղեկավարի վրա՝ նրան կանչում են հարցաքննության, վիրավորանքներ են հասցնում սոցկայքերում: Քրեական գործն ու երկրից դուրս գալու արգելքը նշանակում են, որ խոսքից անցում է կատարվում ուղիղ հալածանքների: Ավելի վաղ, արշավը սահմանափակվում էր կոշտ հայտարարություններով, մեդիահարձակումներով: Հիմա այն վերաճել է քրեական հետապնդման: Անձնական վրիժառությունից եւ Ավստրիայում կայանալիք եպիսկոպոսական ժողովի խափանումից բացի, ստեղծվում է վտանգավոր նախադեպ՝ Եկեղեցու վրա ճնշման առումով. դա ճանապարհ է բացում, որ ապագայում Եկեղեցու բարձրագույն ղեկավարներին մեղադրանքներ ներկայացվեն, եւ թուլացնեն ողջ համակարգը: Գլխավոր արդյունքը կլինի երկրում պառակտման խորացումը: Քաղաքական առաջնորդը պատրաստ է քանդել Եկեղեցին՝ հանուն իր իշխանության պահպանման: Իսկ վարչապետի կողմնակիցները դրանում տեսնում են «օրենքի առաջ բոլորը հավասար են» սկզբունքի կենսագործումը: Կաթողիկոսի հետ հակամարտությունը թուլացնում է Հայաստանի՝ արտաքին քաղաքականության ոլորտում առանց այն էլ խախուտ դիրքերը՝ Անկարայի եւ Բաքվի հետ բարդ բանակցությունների ֆոնին: ՀԱԵ-ն առանցքային նշանակություն ունի սփյուռքի ներուժի կենտրոնացման եւ երկրի միջազգային հեղինակության ձեւավորման գործում, իսկ վերջինիս առաջնորդի դեմ սադրանքները Իլհամ Ալիեւին «քարտ բլանշ» են տալիս՝ ճնշումներն ուժեղացնելու համար: Գարեգին 2-րդի քրեական հետապնդումը հստակ ուղերձ է ընդդիմության մյուս առաջնորդներին: Փաշինյանը պատրաստ է դյուրությամբ զիջելու Հայաստանի դիրքերն արտասահմանում, սակայն երկրի ներսում պատրաստ է ամենակոշտ քայլերը կատարելու: Բարոյական սահմանափակումներ նա չունի, ուստի առաջիկա վեց ամիսները Երեւանում լինելու են հատկապես տուրբուլենտ:

Պատրաստեց Նարեկ Հարությունյանը

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 18.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ԵՎՍ ՄԵԿ ԹՇՆԱՄԱԿԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՍՑԵԻՆ

Ռուս-ադրբեջանական հարաբերությունները, թեեւ երկկողմ համագործակցությանն ու տարբեր պաշտոնական շփումներին, շարունակում են լարված մնալ: Դրա արմատները գալիս են դեռեւս արցախյան հակամարտության հարցում Մոսկվայի՝ իբր հայամետ դիրքորոշումից: Իսկ առավել կոշտ մեղադրանքների գլխավոր «պատրվակը» 2024թ. դեկտեմբերի 25-ին Ղազախստանի Ակտաու քաղաքի մոտ Բաքվից Գրոզնի թռչող ուղեւորատար ինքնաթիռի կործանումն էր, որի հետեւանքով զոհվեց 67 ուղեւորից 38-ը, մեծ մասը՝ Ադրբեջանի քաղաքացիներ: Բաքվի պնդմամբ, ինքնաթիռը վնասվել է ռուսական ՀՕՊ-ի միջամտությունից: Ավելի ուշ Ալիեւն անձամբ ներողություն պահանջեց Կրեմլից, ռուսները խոստովանեցին, որ կատարվածը սխալմունք է, եւ ներողամտություն հայցեցին «ողբերգության» համար:

Ինքնաթիռի պատմության ֆոնին, հարեւան երկրի բռնապետը նոր մեղադրանք է հասցեագրել Ռուսաստանին, այն էլ, ոչ ավել, ոչ պակաս՝ միջազգային մեծ լսարանի առջեւ. Մյունխենի անվտանգության համաժողովում նա պնդել է, թե Ուկրաինայում Ադրբեջանի դեսպանատունը 3 անգամ ռմբակոծվել է: Առաջին հարվածից հետո, նրա խոսքով, «դեռեւս հնարավոր էր ենթադրել, որ դա պատահականություն է: Սակայն ռուսական կողմին փոխանցվել են Ադրբեջանի բոլոր դիվանագիտական կառույցների՝ հյուպատոսական բաժնի, մշակութային կենտրոնի եւ հենց դեսպանատան ճշգրիտ կոորդինատները: Եվ ինչ տեղի ունեցավ հաջորդը: Հետեւեց եւս երկու հարված»: Ալիեւի խոսքով, դա «դիտավորյալ հարձակում էր Ադրբեջանի դիվանագիտական առաքելությունների վրա: Բաքուն Կիեւում իր դեսպանատան գնդակոծումը Ռուսաստանի կողմից համարում է ոչ բարեկամական քայլ»: Ռուսական կողմը, իհարկե, անարձագանք չթողեց այս մեղադրանքները: ՌԴ ԱԳՆ-ում նախ ափսոսանք հայտնեցին այդ ամենի համար՝ նշելով, որ վնասը կարող էր պատճառվել ուկրաինական Patriot հրթիռի հարվածից: ԱԳՆ-ում վստահեցրին, որ հարվածները պլանավորելիս «հաշվի են առնում դիվանագիտական կառույցների տեղակայումը» եւ բացառում են դիտավորյալ վնասը: Միաժամանակ, ՌԴ ԱԳ նախարարի տեղակալ Միխայիլ Գալուզինը ՏԱՍՍ-ին տված հարցազրույցում հայտարարեց, որ Բաքուն կարող է «բարի կամք դրսեւորել»՝ ազատ արձակելով 11 ռուս քաղաքացիներին: Նրանց ձերբակալել էին անցյալ տարի, թեպետ իբր թմրամիջոցների ապօրինի շրջանառման մեղադրանքով, բայց ակնհայտ է՝ Կրեմլին «ատամ ցույց տալու» նպատակով: Նույնպիսի տրամաբանությամբ, Բաքվում փակեցին «Ռուսական տունը», որն աշխարհում ընդունված է համարել Մոսկվայի ազդեցության «փափուկ ուժ»: «Բաքվի կողմից մեր քաղաքացիների վերաբերյալ համապատասխան որոշումը կարող է բարիդրացիության ոգով բարի կամքի դրսեւորում լինել»,- ասաց դիվանագետը՝ հավելելով, որ «ռուսների արագ ազատ արձակումը բացարձակ առաջնահերթություն է»:

Ադրբեջանում սկսեցին հակադարձել, թե AZAL-ի կործանումից, Ռուսաստանում ադրբեջանական համայնքի դեմ «հետապնդումներից» եւ ձերբակալություններից հետո Մոսկվան իրավունք չունի խոսել բարի կամքի դրսեւորումներից: Առհասարակ, վերջին շրջանում եւ հենց վերոնշյալ իրադարձությունների պայմաններում ադրբեջանական իշխանությունների, հասարակության եւ մասմեդիայի շրջանում գերիշխում են հակառուսական տրամադրությունները: Ռուսաստանի եւ ռուսների մասին համընդհանուր խոսույթն առանձնանում է ատելությամբ եւ հիշաչարությամբ, խոսվում է, այսպես կոչված, ռուսական շովինիզմի, խտրական վերաբերմունքի եւ կայսրապաշտական նկրտումների մասին: Բավական է հպանցիկ ծանոթանալ պետական եւ մասնավոր հայտարարություններին, հրապարակումներին՝ դրանում համոզվելու համար:

Մեկ նկատառում եւս. արցախահայության դեմ 2023 թ. ահաբեկչական գործողությունների ժամանակ ռուս խաղաղապահներ սպանվեցին: Եւ ոչ մի ներողություն Բաքվից: Գուցե հիմա Մոսկվան քաղում է իր «դիվանագիտական նրբանկատության, փափուկ վերաբերմունքի դառը պտուղները»:

Արա ԱԼՈՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am